

Այս գրքը չէր ունեւ
Եւրոպայի քիմիա Կարէն Անտոնիայի »

ԽԱՄԻՍ

ՀԱՆԴԵՍ

Նախնական եւ Երկրորդական Կրթութեան

ՀՐԱՏԱՐԱԿԵԱԼ ԸՆԴ ՎԵՐԱՏԵՍՁՈՒԹԵԱՄԲ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՅ ԱԶԳ. ԿԵԴՐ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

ԿՐ. ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԷՆ ԱՄՍՈՅ 1^Ի ԵՒ 16^Ի

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՄԱՍՆԱԲՈՒՄԲ

Դ. Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ (Ա. Ե. Ե. Ե. Ե.)

Գ. Ա. ՄԱԼԱԹԵԱՆ, Մ. Գ. ՄՈՋԵԱՆ, Յ. Թ. ՀԻՆԴԻԵԱՆ, Յ. ՄԷԹԵԱՆ

ԱՐՏՕՆԱՏԷՐ

Կ. Ս. ԻԼԹԻԼԵԱՆ

Թիւ 2

16 Մայիս

ՏԵՍԻՆ

ՅՈՎԶ. Թ. ԱՐԱՄԵԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
1894

ՏՊԱԴՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԵՐԱԴՐՈՒԹԻՒՆ

Գ. ՊԱՂՏԱՏԻԵԱՆ


Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ի Թ Ի Ն

Բարոյական դաստիարակութիւն	Ռ. Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ
Դպրոցական առողջապահութիւն	Գ. Ա. ՄԱՂԱԹԵԱՆ
Մշամարզական հրահանգներ մայրենի լեզուի	Ռ. Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ
Քաղաքեալ ընթերցուած գրաբար Ոսկեբերանէ	Յ. ՍԷԹԵԱՆ
Կիր (իրագիտական դաս)	Մ. Գ. ՄՈԶԵԱՆ
Ծաղկունք Օսմ. մասենագր. — Մուալլիմ Նանի	Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ
Լուրբ եւ տեղեկութիւնք	
Հականեխականք	Յ. Թ. ՀԵՆՂԵԱՆ
Մտածումներ — Տիպոքիլէի գործերէն քաղուած	

Ա Ձ Դ

Մասիսի խմբագրութիւնը պատրաստ է մասնաւոր յօդուածի կամ բոլորակութեան ձեւի տակ գոհացում տալ բոլոր անոնց՝ որք մասնաւոր նամակաւ բացատրութիւն կամ կարծիք խնդրեն իրմէ՝ դպրոցական խնդիրներու, մէքոսներու, կրթութեան ո՛ր եւ է նիւղի վերաբերեալ դժուարութեանց եւլն. մասին:

Շնորհակալութեամբ կ'ընդունի եւ կը հրատարակէ նաեւ դպրոցական խնդրոց վրայ իրեն հաղորդուած շանեկան ու ամփոփ տեղեկութիւններ, ինչպէս նաեւ իր յատուկ աշխատակիցներէ դուրս ձեռնհաս ուսուցչաց կամ կրթական գործոց հետա-
հրուող ո՛ր եւ է կարող անձի կողմէ յղուած օգտակար գրութիւններ որ իր ծրագրին սահմանէն դուրս չեն ելներ:



ՀԱՆԴԵՍ

Նախնական եւ Երկրորդական Կրթութեան

ՀՐԱՏԱՐԱԿԵԱԼ ԸՆԴ ՎԵՐԱՏԵՍՉՈՒԹԵԱՄԲ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՅ ԱԶԳԱՅԻՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

43^{րդ} Տարի Նոր շրջանի քիւ 2 16 Մայիս 1894

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

(Շարունակութիւնն նախորդ քիւէն)

— Կամքի եւ նկարագրի դաստիարակութիւնը, — Բարոյական դաստիարակութիւնը յայնժամ կատարեալ է, երբ բարի ունակութեանց, համակրական եւ ազնուական զգացմանց վրայ կ'աւելնայ զօրաւոր կամք մը: Կամքը կարեւոր է նոյն իսկ սովորութիւնները կազմելու համար, վասն զի սովորութիւնք, մանաւանդ բարիները, միշտ գիւրիին, հեշտ, առանց ճգան կրկնուած գործողութիւններէ չեն ծնիր, այլ տաժանագին գործերէ զորս կատարելու համար կամաց ուժին պէտք ունի մարդ, — նաեւ սովորութիւնները պահպանելու համար, վասն զի յաճախ կրնան պատահիլ կենաց մէջ պարագայներ, տագնապալի վիճակներ, կրից յանկարծական յուզումներ որք մեր կեանքի սովորական ընթացքը կը խանգարեն եւ կ'սպառնան վեր ի վայր չըջել մեր ամենէն աւելի հաստատուած սովորութիւնները, պարագայներ յորս զօրաւոր կամք մը միայն կրնայ զմեզ փրկել եւ ուղիղ ճամբուն մէջ պահպանել, — նաեւ զգաց-

մանց ապահովելու համար իրենց գործունէութեան բովանդակ զօրութիւնը, վասն զի շատ անգամ մարդ կ'զգայ, բայց ըստ իւր զգացման գործել կը վարանի, կը տկարանայ: վասն զի կան զգայնութիւնք շատ փափուկ բայց ոչ զօրաւոր, կան թոյլ ու դանդաղկոտ բնութիւնք: ահա՛ յայնժամ հզօր կամք մ'իւր ձեռքը կ'երկնցնէ զգացման ու կը կանգնէ եւ կը մղէ զայն: Եւ վերջապէս բարոյականութեան կատարելութիւնը կը կայանայ բարի կամեցողութեան մը մէջ որ միշտ պտտրաստ ըլլայ մեր գործունէութիւնը բանականութեան, այն է բարեոյն ու պարտուց ցուցած ուղղութեան մէջ վարելու, եւ որով կը լինիմք մանաւանդ ճշմարտապէս բարոյական, այն է ազատօրէն բարին ընտրող էակներ, ի ձեռքն ունող զսանձ առաջնորդութեան մեր կենաց:

— Նկարագիրն (caractère) ընդարձակ առմամբ անհատին տիրող հանգամանաց ու յօժարութեանց ամբողջութիւնն է, անոր բարոյական գիմագծութիւնը, որով կը զտուուի այլ անհատներէ: Անձուկ առմամբ նկարագիրը զօրաւոր, գործելու մշտապատրաստ, սկզբունքներով առաջնորդուելու համար բաւական ոյժ ունեցող, միշտ որոշ ուղղութեան մը համեմատ

գործող եւ իւր որոշմանց գործադրութեան մէջ յարատեւող կամքի համանիշ է. այսպէս կ'ըստի նկարագրի *skér* մարդ մը (un homme de caractère): Բայց ո՛ր եւ է առմամբ նկարագրին անբաժան է կամքէն ու անոր մշակումէն: Նոյն իսկ առաջին՝ ընդարձակ առմամբ, ոմանց կարծածին պէս, կրաւորական, ճակատագրային բան մը չէ, վասն զի անհատին նկարագրին կազմութեան մէջ մեծ է ու կրնայ մեծ ըլլալ կամքին բաժինը: Ապա կարեւոր է յոյժ նկարագրի դաստիարակութիւնը. ա՛յն է որ պիտի կազմէ բուն մարդը, պիտի աւարտէ կազմել քառոյակիւն անձնաւորութիւնը:

— Այս դաստիարակութիւն երկու գըլխաւոր տարերք կը պարունակէ. մին իմացականութեան, քանականութեան մասն է, եւ միւսը կամքին: Նկարագրի տէր ըլլալու համար պէտք է ունենալ որոշ ու խորհրդածեալ սկզբունքներ, ունենալ սովորութիւնը խորհրդածելու, անդրադառնալու, բանիւ ու յետ քննութեան գործելու. եւ յետոյ, աշխարհիւն, ոյժ կամքի՝ որոշելու, ընտրելու եւ գործադրելու համար այն վարմունքն որ համաձայն է բանականութեան վճռոյն:

Ապա նկարագրի դաստիարակութիւնը կարելի է երկու բանի ուշադրութիւն եւ ջանք ընելով. մէկ մը՝ վարժեցնելու միտքը ինքնին խորհելու, ուշադրութեան, խորհրդածութեան, քննութեան, մտածելու իրաց հետեւութեանց վրայ, անդրադառնալու եւ ազատ համոզումներ կազմելու կեանքի ու բարի եւ օգտաւէտ գործունէութեան սկզբունքներու վրայ. եւ մէկ մ'ալ՝ կրթելու, մարզելու կամքն գործելու, վարժեցնելու աղան ի գործ դնելու իւր ազատ կամեցողութիւնը, իւր ինքնակամ անկախ գործունէութիւնն ունենալու, ինքզինքին հնազանդելու, իւր բարոյական անկախութեան խափանարար ներքին ու արտաքին դրդմանց ընդդիմագործութեան ճիգ ընելու, դժուարութեանց ու վտանգաց դէմ արիանալու:

Դպրոցը կարող է ընել զմին եւ զմիւսն:

Ուսուցման բանաւոր եղանակներն մեծապէս պիտի նպաստեն այսմ ի մասին իմացականութեան, արթնցնելով յաշակերտին մտաւոր կեանքը, գործունէութիւնը, եւ վարժեցնելով զնա ինքնին խորհելու եւ հասկնալու, կշռելու եւ գտնելու: Կամաց մարզանքի մասին գալով, նուրբ դեր մ'ունի դաստիարակն դպրոցական կարգապահութեան անհրաժեշտ հնազանդութեան պահանջներն հաշտեցնելու համար կամքի կրթութեան պահանջից հետ: Անշուշտ հնազանդութիւն պիտի պահանջուի, բայց միանգամայն յարգելով տղան ազատակամութիւնն ու միջոց ընձեռելով անոր կիրարկութեան. Օրինաց, կանոնաց հնազանդութիւնն ըստ ինքեան ո՛չ թէ արգելք մ'է ազատակամ գործունէութեան, այլ ընդհակառակն սուրի մ'անոր մարզման. բայց պէտք է որ աղան գիտութեամբ եւ կանաւ հնազանդի: Ահա՛ այն փափուկ կէտն որու պէտք է ուշադիր ըլլալ: Պէտք է աղան զգայ թէ ո՛չ եթէ բռնաւոր կամքի մը, ուրիշի մը մտահաճութեանց առջեւն է որ կը խոնարհի ի հարկէ, այլ բանականութեան, որ կը հրամայէ հպատակիլ կարգի կանոնի, նախադասել օգտակարը հաճելին, պարտականութեան կատարումը կրքին գոհացման: Ի հնազանդելն՝ մեծերը միշտ պէտք է որ հասկնան զայդ, առանց թոյլ տալու իրենց որ յուր փաստաբանութեան մը մղուին, եւ փոքրերը պէտք է տակաւ վարժեցնել զայս հասկնալու:—Սրիութեան գալով, ա՛յդ՝ կենաց մէջ մանաւանդ կրնայ զարգանալ հանդէպ այն դժուարութեանց զորս կեանքը կը հանէ կամքին դիմաց, մինչ դպրոցական կեանքն ընդհանրապէս հանդարտ ու կանոնեալ կեանք մ'է. բայց ոչ նուազ եւ այս վերջինը կ'ընծայէ սուրիներ ուր արիութիւնը կը մարզուի, ինչպէս, բացի մարմնամարզական փորձերու պահանջած արիութենէն, ընդհանրապէս ուսմանց դժուարութիւնք, դաստիարցմանց ու մրցմանց ու հրապարակային հարցաքննութեանց փորձք: Ինքնակամ, ինքնախորհուրդ գործելու

վարժութիւնն ալ կը զօրացնէ բնականաբար պատասխանատուութեան զգացումը, որ իր կարգին. պիտի նպաստէ խորհրդածեալ գործողութեան:

Ի վերջոյ յայտնի է թէ, ըստ որում կամքը կրնայ չարի ալ գործիք ըլլալ (մեծ չարագործներն ալ ըստ իւրեանց կերպի կամք մը կը յայտնեն), խնդիրն թափի կամեցողութիւնը, թափոյն կամքն մշակելու վրայ է, կամ, որ նոյն է ըսել, «կամքի մշակութիւնը անբաժան է բանականութեան եւ բարոյական գիտակցութեան կամ խղճին մշակութենէն»:

— Պատժոց եւ վարձուց դրութիւն. — Կարգապահական միջոց (discipline): — Պատիժք եւ վարձատրութիւնք իբրեւ կարեւոր օժանդակ գործածուած են միշտ բարոյական դաստիարակութեան մէջ, եւ արդարեւ չէ կարելի ուրանալ պատժոց ու վարձուց դրութեան մը հարկաւորութիւնը եւ օգտակար ազդեցութիւնը, թէպէտ հապէս երկրորդական գործիքի մը դերն ունին անշուշտ:

Եղած են որք պահանջած են բառնալ պատիժները կամ վարձատրութիւնքը կամ երկուքն ի միասին: Պատիժները, կ'ըսեն, վախ կ'ազդեն, երկչոտ կ'ընեն, ատելութեան՝ խեղութեան զգացումներ յառաջ կը բերեն տղուն սրտին մէջ ընդդէմ ուսուցչին (կամ ծնողին). իսկ վարձատրութեանց համար կ'ըսեն թէ կը հպարտացնեն, անախառնութեան զգացում կը ծնցունեն, եւ տղայոց մէջ նախանձու եւ մախանաց ոգին կը սնուցանեն: Սակայն մանկավարժից ամենամեծ մասն այն կարծիքն ունեցած է թէ չէ կարելի կրթողական միջոցներէ դուրս նետել պատիժքն ու վարձքն, եւ թէ առաջնոց երկիւղն եւ վերջնոց յոյսն, որպէս հասուն մարդոց, նոյնպէս եւ տղայոց մէջ կրնան շարժառիթներ ըլլալ պարտուց կատարման ու արդիւնաւոր ճգանց յորդորել: Ու թէպէտ նշանակեալ անպատեհութիւնք աւելանալի են ու խիթալի, այսու հանդերձ ճարտար դաստիարակն կարող է մեղմացնել զանոնք մեծապէս, զգուշութեամբ ու չափով ի գործ դնելով վարձքն ու պատիժք:

Բնական հակադրութեանց դրութիւնը: — Ռուսօ կ'ուզէր արդէն որ էմիլ իւր յանցանքներուն համար բնութենէն միայն պատժուէր: Բարկութեան վայրկեանի մը մէջ էմիլ խորտակեց իւր սենեկին պատուհանները. լաւ, լաւ հարբուխ մը պիտի սովորեցնէ իրեն թէ գիշերուան պաղ օդին դիմաց անպատասպար մնալն ո՞րքան անհաճոյ բան է: Հերպերդ Սթենսլը իւր Դաստիարակութեան Գրքին մէջ կ'ընդունի եւ կը յանձնարարէ այս դրութիւնը, բնական հակադրութեանց դրութիւնը, եւ կը մերժէ շինծու, կամայական պատիժները: Եթէ տղան անխուհեմութեամբ ձեռքը ճրագին երկնցուց կամ գնդասեղներու բարձկին, մատները պիտի այրին կամ խայթուին, ու ալ այդ անխուհեմութիւնը չպիտի գործէ, եւ պիտի հասկնայ ինքնիրեն մօրն արգելքին անհնազանդ գտնուելու ձախող հետեւանքը: Եթէ տակնիվրայ ըրաւ իր սենեակը, թո՛ղ զայն շտկելու ստիպուի: Դուրս ելնելու՝ պտոյտի երթալու պահուն միշտ յետամնաց է, ոչ երբէք կազմ. թո՛ղ տունը մնայ որ սովորի: Զմեւին կոտորեց կամ հագուստը պատուեց. ա՛լ նոր զմեւի, նոր հագուստ չպիտի առնուի իրեն, եւ ինք պիտի խորհի ու սովորի իրեն տրուածը խնամով պահել ու գործածել: Ս. յս բնական պատիժները, կ'ըսէ, սա առաւելութիւնն ունին որ յանցանքին համեմատական են եւ միանգամայն անխուսափելի, անվրէպ: Բաց աստի, իբրեւ բնական հետեւութիւն իրաց, բնաւ ատելութեան ոգի մը չեն ծնուցաներ ծընողքին կամ դաստիարակին դէմ, ընդհակառակն անոնց կանխադրյալ արգելմանց կամ զեկուցմանց յարգն ու նոցա հնազանդելու հարկն առաւել զգալի կ'ընեն իրեն՝ իւր իսկ փորձով, եւ այսպէս մանկան ու դաստիարակին մէջ համակրութիւնն մնալով անվթար, նոյն իսկ այս համակրութիւնը կը ծառայէ հզօրապէս ուղղութեան, դաստիարակին համակրանաց կորուստը, անոր դժգոհութիւնը կամ պարսաւը լինելով յետոյ միայլ բնական հակադրութիւն տղուն

յանցանայ եւ ըստ այնմ կազմելով բնական պատիժ մը, ոչ նուազ զգուշացուցիչ»

Կը տեսնուի թէ Հ. Սրէնսէր բնական հակազդործութեանց մէջ կը դնէ տղուն չուրջը եղող անձանց, զորս նա կը սիրէ, համակրութեան նուազումը, դժգոհութիւնը, պարտաւր, եւ այս ճամբով անուղղակի կ'ընդունի պատիժն ալ՝ գէթ նկատեալ իբրեւ ծնողքին կամ ուսուցչին դժգոհութեան արտայայտութիւն։ Կ'ընդունի նաեւ որ ծնողք զրկեն մանուկն այս կամ այն վայելքէն որուն յարգը չըզիտցաւ, եւ անշուշտ այս ալ, ծնողաց կամքով յառաջ եկած, թէպէտ ուղղակի իւր դործոյն հետ առնչակից, կրնայ յաջըս մանկան համարուիլ ծնողքէն հարկադրեալ պատիժ մը։ Բայց սա ստույգ է որ Հ. Սրէնսէր կ'ուզէ որ պատիժը ոչ թէ մեծերուն բռնութեան մէկ արդիւնքը սեպուի, այլ բնական հետեւանքն իսկ գործոյն, որ խորհիլ տայ տղուն թէ գործերն չեն անտարբեր, կը վանազանին իրենց լաւ կամ յոռի արդեամբք եւ հետեւապէս մարդ պարտաւոր է խորհելով գործել, հետեւութեանց վրայ մտածելով, մանաւանդ թէ իրմէ մեծերուն՝ փորձառուներուն ազդարարութեանց անսալ. եւ խորհրդածելով գործելու վարժուիլ հարկաւ սկիզբն ու պայմանն է բարոյացման։ Սկզբունքը ճիշդ է եւ պատիժին արդիւնաւորութեան կարեւոր մէկ պայմանը. բայց կանոնով հաստատեալ ու նախատեսեալ պատիժ մ'ալ չի՞ կրնար նկատուիլ տղայէն իբրեւ տհաճելի հետեւութիւն մը՝ զոր իւր իսկ գործով կը հրաւիրէ իր վրայ։ Հ. Սրէնսէր պիտի աւարկէր թէ այդ կամայապէս հաստատեալ պատժոյն ու յանցաւոր վարմունքին մէջ պատճառի եւ արդեանց բնական կապ մը չի տեսներ տղան, այլ կամայական, քմածին բան մը. սակայն չի՞ կրնար ըսուիլ թէ տղան ծնողքին կամ դաստիարակին դժգոհութիւնն ալ անխառն, անտեղի համարի, անոնց բնաւորութեան կամ քմահաճոյքին արդիւնք. իսկ եթէ ո՞ր եւ է կերպով անոնց հակակրութեան արժանանալ ցաւ մ'է իրեն յորմէ պիտի խու-

սախի, պատիժն կրնայ արդարանալ իբրեւ աւելի ազդեցիկ ցաւ մը, հետեւանք դաստիարակողին տհաճութեան։ Յետոյ, անշուշտ ճիշդ չէ ըսել թէ բնութիւնը յանցանքին կը համակշռէ պատիժը։ Փոքրիկ անխոհմտութիւն մը կրնայ ծանր հետեւանքներ յառաջ բերել. եթէ էմիլի կոտորած ապակիները իսկոյն չվերանորոգուին անոր ծնողքէն, էմիլ գիշերը հարբուխի տեղ կրնայ թոքոտապ մ'ունենալ ու մեռնիլ։ — Շատ անգամ, բնութիւնը յամր է պատժելու եւ կազմուածքին չընորհիւ կրնայ այս ոք գէթ ժամանակ մը ազատ մնալ պատժէ որ իսկոյն կը զարնէ մի ուրիշ. եւ այդ ազատութեան միջոցին յուր սովորութիւնք կրնան ժամանակ ունենալ հաստատուելու։ — Բաց աստի, վարժեցնել տղան վարմունքին յուրութիւնը միայն հետեւանքին առաւել կամ նուազ ցաւառութ ըլլալէն չափել եւ զգուշանալ անկէ տհաճոյ հետեւանացն համար միայն, սովորեցնել է տղուն շահուն չափով չափել՝ հաշուել ամէն ինչ եւ չզգուշանալ յոռի գործէն՝ երբ անմիջական կամ մերձաւոր թէ հեռաւոր ո՞ր եւ է վնաս մը իր անձին չնախատեսէ, եւ վերջապէս է՞ր տղան թողուլ մի միայն իր անձնական փորձառութեան, եւ այդ փորձառութիւնը գործածելով հանդերձ՝ օգուտ չհանել անոր մարդկութեան փորձառութենէն, որպէս իմացական դաստիարակութեան՝ նոյն եւ բարոյականին մասին, եւ պատուէրներով ու կանխարգել նախազգուշ միջոցներով ու բարի սովորութեանց հաստատմամբ յաճախ տխուր փորձառութիւն մը չհանխել։ — Բնական հակազդործութեանց դրութիւնը՝ ունենալով հանդերձ իւր լաւ ու մտածելու արժանի կողմը՝ չի կրնար ընդունուիլ իբրեւ բացարձակ ու կատարեալպէս բաւական դրութիւն մը բարոյական կրթութեան։

— Յանդիմանալիքիւք եւ պատիժի։ — Ուրեմն ուղղակի միջոցներով եւս պէտք է գործել, յանդիմանութեամբք եւ պատժովք։ Յանդիմանութիւնք կ'ենթադրեն բնութիւններ յորս պատուոյ զգացումն, ուսուցչին սէրն ու անոր անհաճոյ ըլլա-

լու երկիւղը զարգացած են արդէն, այլ անբաւական կը մնան այն տղայոց համար որք չունին խորին եւ անկեղծ յարգանք մը դաստիարակին խօսքերուն համար եւ չեն զգայուն ամօթի։ Սոցա համար պէտք է դիմել եւ պատիժներու։

Յանդիմանութիւնք պէտք է լինին մեղմ, համոզակեր, զգածեալ — Պատիժք, որ պէս զի լինին արդար եւ արդիւնաւոր, պէտք է որ լինին համաձայն սա կանոնաց։ 1. Համեմատեալ ըլլան ո՛չ միայն յանցանքին ծանրութեան, այլ եւ աշակերտին զգայնութեան աստիճանին։ 2. Սովորական դարձած եւ յաճախ կրկնուելով իրենց ազդեցութիւնը կորսնցուցած չըլլան։ 3. Խնամով աստիճանաւորուին։ պէտք է թեթեւագոյններէն սկսիլ եւ ծայրագոյն խստութեանց հարկաւորութեան պարագային մէջ միայն երթալ — Մարմնական պատիժները պէտք է բոլորովին ի բաց վտարել դպրոցէն։ Ծեծը գազանական եղանակ մ'է՛ յուզութիւն բերելու, դաստիարակին դէմ գրգռում յառաջ բերելու եւ խուլատելութեան ոգի ներշնչելու յարմարագոյն միջոցն է։ Նա չարաչար կ'ստորնացնէ տղան՝ իրրեւ տնասնոյ վարուելով իրեն հետ, եւ վերջապէս, վասն զի մանաւանդ բարկութեան ատենն է որ ուսուցիչը կը զարնէ, ողբալի ու անդարմանելի հետեւութիւնք իսկ կրնան յառաջանալ։ ամէն պարագայի մէջ, բարոյական էակն ուղղելու միջոցը չէ բնաւ։ Այս մասին բոլորովին համակարծիք եմք գաղիական մանկավարժութեան սկզբանց, եւ կը զարմանամք որ յԱնգղիա եւ ի Գերմանիա լուրջ մտքեր կը փաստաբանեն գաւազանին ու հարուածոց փրկաւէտ ազդեցութիւնը, եւ պաշտօնական շրջաբերականներ կը սահմանեն հարուածոց թիւն ու բնութիւնը։ Այդպիսի կրթողական եղանակ մ'արդէն չէ կը համարէր ամենէն յուսեգոյնը, ամէն տեսակէտներով ամենէն վնասակարը։

Գովեստ է վարձատրութիւնք։ — Գովեստք եւ վարձք կը զարթոյցանեն նախանձաւորութեան ոգին, խրախոյս ու գրգռու կաւտան արդիւնաւոր ճգանք։ այլ

պէտք է որ ի գործ դրուին իմաստութեամբ եւ չափով։ Գովեստը միայն արդիւնքին չպիտի ուղղուի, այլ նաեւ ճգանք, բարի կամեցողութեան, եւ առանց անթերի ըլլալու՝ արդէն բարւոքում ու լաւին ու լաւագունին եւանդը ցոյց տուող տղայք ու վարք եւ աշխատութիւնք եւս պէտք է որ գովեստի ու քաջալերանաց արժանանան։ Վարձատրութեանց նպատակն է պարտոց գաղափարը հանդիս գաղափարի մը կցելով յորդորել ի ջան, ի բարւոքում։ այլ պէտք չէ ընել այնպէս որ տղայք բերուին վարձատրութիւնը (լաւ նիշը, աստիճանը, մրցանակը) նկատել իրրեւ նպատակ, այլ միշտ իրրեւ նշան իրենց իրական լաւութեան եւ ուսուցչին գոհունակութեան, որք պարտին նկատուիլ բուն կէտ նպատակի աշակերտին ջանքերուն ու փափաքին։

Վերջապէս, պէտք չէ բնաւ մտքէ հեռացնել սա կէտը, թէ՛ պատժոց եւ թէ՛ վարձուց գործադրութեան մէջ, թէ կըրթողական միջոցաց կամ կարգապահութեան նպատակը միայն կարգն ու կանոնաւոր ու բուն աշխատութիւնը պահպանել չէ ի դպրոցի եւ ի դասարանի, այլ պարտաւէտ շղայն մարդ ըլլալու եւ զինքնա կառավարելու։

Ռ. Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆ

Կան հեղինակներ որոնք Ֆիզիքական դաստիարակութիւնը դպրոցական դաստիարակութեան մասը չեն համարիր։

Բայց քանի որ անվիճելի կերպով բուն դպրոցական դաստիարակութեան մասը կը համարուի ընդհանրապէս մտքի եւ բարոյքի մշակութիւնը, եւ քանի որ մարդուն բնախօսական վիճակը կ'ազդէ իր հոգեբանական վիճակին վրայ ու փոխադարձաբար, պէտք է ընդունինք միանգամայն թէ դաստիարակը պարտաւոր է՝ իր պաշտօնին բարւոք կատարմանը հա-

մար՝ ուշագրութենէ չվրկացնել այն աղբակները որոնք կրնան փոխել իր աշակերտին բնախօսական վիճակը ի լաւն կամ ի յոռին :

Որո՞նք են այն աղբակները որոնց ենթակայ կրնայ ըլլալ տղան դպրոցին մէջ, եւ որոց հանգամանքները քիչ կամ շատ փոփոխել կրնայ դաստիարակին ձեռնհասութեան մէջ մտնել :

Այդ աղբակներն են . նախ՝ դպրոցական միջավայրը, ուր տղան պիտի անցնէ երկար տարիներ օրական դրեթէ վեց ժամ . երկրորդ՝ այն եղանակը որով պիտի ապրեցնենք տղան այդ միջավայրին մէջ :

Ամենէն առաջ, պէտք է քննենք ուրեմն թէ ի՞նչ պայմաններու գոհացում տալու է դպրոցական միջավայրը որպէս զի տղուն բնախօսական հաւասարակշռութիւնը չեղծանի այլ ապահովութիւն, որպէս զի անոր գործարանները զուրկ չմնան իրենց անհրաժեշտ պէտքերէն, եւ կարող ըլլան ապրիլ ու միանգամայն զարգանալ անխափան :

Դասարանին տարածութիւնը . — Եթէ նեղ ու փոքր բնակարան մը, մաքուր օդի անբաւականութեամբը, կամաց կամաց կ'եղծանէ բնակչաց առողջութիւնը, խուռնամբոյ դասարան մը կրնայ, միեւնոյն պատճառաւ, թունաւորել տղոց մատղաջ թոքերը :

Կարգապահութեան, արդիւնաւորութեան եւ առողջապահութեան եռակի տեսակէտներով դասարանի մը աշակերտաց թիւը ընդհանրապէս լրացեալ կը համարուի երբ այդ թիւը հասած ըլլայ 50 ի : Արդ, որովհետեւ մէկ անձի համար մէկ ժամուան մէջ 10 խորանարդ մէթր օդի պէտք կայ միջին հաշուով, ուրեմն դասարանը՝ 50 աշակերտի համար՝ պէտք է ունենայ 500 խոր. մէթր պարունակ, ենթադրելով որ ամենէն շատ մէկ ժամ միայն պիտի մնան աշակերտք անոր մէջ . ըստ այսմ, դասարանին երկայնութիւնը ըլլալու է 18 մէթր, լայնութիւնը 7 մէթր բարձրութիւնը 4 մէթր : Այնպիսի առողջապահական պահանջ մըն է այս զոր իրականացնել կարելի չէ սովորաբար .

ուստի գործնականի մէջ 1, 25—1, 50 քառակուսի մէթր տեղ, կամ թէ 5 խոր. մէթր միջոց կը հաշուեն ընդհանրապէս իւրաքանչիւր աշակերտի համար :

Հինգ խոր. մէթր փոխանակ 10 խոր. մէթրի, անբաւական է, եւ վնասակար կերպով անբաւական, եթէ դասարանը օգտուած չըլլայ օդամաքրութեան այնպիսի գրութեամբ մը որ մէկ ժամուան մէջ գոնէ հինգ անգամ նորոգուի անոր օդը :

Օդամաքրութիւն . — Օդին նորոգութիւնը աւելի պէտք է քան ժուժէ ժուժ կերակրումը, վասն զի նախ՝ սպառած է անոր թթուածինը որ միակ տարրն է մեր կեանքին բոցը արծարծող, երկրորդ՝ վասն զի արտաշնչութեամբ անոր մէջ լեցուած է բնածխական թթու՝ որ անյարմար է կեանքը պահպանելու, եւ ջրաշոգի՝ որուն մէջ կը տատանին մեր մարմնէն անջատուած անթիւ անհամար ժանտահոտ նեխեալ մասնիկներ՝ ամէն ալ թունաւոր : Մասնաւորաբար, մանուկն աւելի շուտ կ'ապականէ օդը, քանզի աւելի տրագ կը շնչէ : Պէտք է արտաքսել ապականեալ օդը եւ դուրսէն բերել թարմ, կենսատու օդ :

Օդամաքրութեան համար զանազան միջոցներ կան . անոնցմէ ամենէն դիւրամատչելին ու գործնականն է երբեմն երբեմն դուռ ու պատուհան բանալ դէմ դիմաց :

Ջեռուցում . — Դասարանին բարեխառնութիւնը ողջապահիկ կ'ըլլայ երբ ունենայ 14⁰—16⁰. այս աստիճանը որոշելու կարող անոխալելի եւ անշահախնդիր դատաւորը ջերմաչափն է : Հետեւաբար ամէն դասարան ունենալու է այս գործիքէն հատ մը, եւ նոյն իսկ երբեմն մէկէ աւելի, եթէ ընդարձակ է . զանոնք դնելու է վառարանէն հեռու :

Ջեռուցման գործիքներէն առ մեզ գործածականներն են վառարանները : Վառարանի մը մեծութիւնը համեմատական պէտք է ըլլայ ջեռուցանելի տեղւոյն տարածութեան հետ : Յախճապակեայ վառարանը ձոյլէ (skofink) կամ թանագէ (սաճ)

վառարանէն աւելի աղէկ է, վասն զի վերջինները՝ իրենց կողերէն դուրս կ'արտահոսեն այրումէ յառաջ եկած կազերը, չուտ կը տաքնան եւ չուտ ալ կը պաղին։ մինչդեռ առաջինը չունի այս անպատեհութիւնները։ Կիտուածակերտ ձոյլէ վառարանը ունի յախճապակեայ վառարանին ամէն առաւելութիւնները։ Վառարանին բանալին՝ որ գոցուելով կրնայ անչնչութիւն պատճառել՝ կարգադրելու է այնպէս որ տղաք կարող չըլլան ձեռք հասցնել անոր։ Վառարանը պէտք է զետեղել տղոցմէ 1, 25 մէթր հեռու, կամ, եթէ մեծ է, 2 մէթր հեռու։ անոնց շատ մօտ ըլլալու չէ, որպէս զի տաքութեան կիզիչ ու չոր արտահոսութենէն չգերազարգին, իրենց ուղեղին մէջ արիւն չժողովուի, եւ որպէս զի, երբ յետոյ դուրս ելնեն, քրոմահարներու պէս չսկսին սարսռալ։

Այրելի նիւթոց գալով, անտառաշատ գաւառաց համար փայտը ամենէն լաւն է։ Իսկ այն տեղերն՝ ուր իւզաթափ հանքածուխ (fof) կարելի է հայթայթել, փայտէն նախամեծար համարուելու է այն, քանզի փայտէն աւելի աժան է, մաքուր է, դիւրին է գործածութիւնը, հոտ չ'արձակեր եւ շատ տաքութիւն կ'արտադրէ։

Լուսաւորութիւն. — Լուսաւորութեան դրութիւնը կ'ազդէ աչքին կազմական վիճակին եւ նստելու դիրքին վրայ։

Այն առաջին պայմանը՝ որուն պէտք է գոհացում տայ լուսաւորման ո՞ր եւ է դրութիւն՝ է բաւարար լոյս մը տրուել ամէն ուրեք։

Ձուլցերիոյ մէջ՝ այս նպատակաւ՝ դասարանի մը պատուհանաց ապակեայ մակերեւոյթը հաւասար կ'ընեն ամբողջ դասարանի մակերեւոյթին հինգերորդ կամ չորրորդ մասին, կամ թէ մէն մի աշակերտի համար կը հաշուեն 40 հարկերորդ ամմէթր քառ. ապակեայ մակերեւոյթ, ինչ որ 50 աշակերտնոց դասարանի մը համար՝ կ'ընէ 20 քառակուսի մէթր մակերեւոյթ։

Եթէ այս մակերեւոյթը բաժնենք չորս պատուհանի, ամէն մէկուն կ'ընայ 5

քառ. մէթր բաժին, իսկ եթէ բաժնենք երեք պատուհանի, ամէն մէկուն կ'ընայ 6, 66 քառ. մէթր. բաժին։

Եւ եթէ այնուհետեւ, այս ծանօթութիւններուն համեմատ, հաշուենք մէն մի պատուհանի բարձրութիւնն ու լայնութիւնը, կը գտնենք որ չորս պատուհանները պիտի ունենան 4 աւան մէթր բարձրութիւն եւ 1, 25 աւան մէթր լայնութիւն, եւ երեք պատուհանները պիտի ունենան 3, 33 աւան մէթր բարձրութիւն եւ 2 աւան մէթր լայնութիւն։

Լուսաւորման մէջ՝ ի նկատ առնուելիք ուրիշ կարեւոր կէտ մըն ալ է որոշել թէ ո՞ր կողմէն գալու է լոյսը. աջէն թէ ձախէն, ետեւէն, դիմացէն թէ վերէն։

Լոյսը պէտք է կողմնակի գայ. դիմացէն եկածը կը շրայնէ աչքը, եւ տղաք բնազդաբար ջանալով զերծանիլ անկէ, կարելի եղածին չափ վար կը ծռեն իրենց գլուխը որպէս զի մասամբ մեղմացնեն լոյսին սաստկութիւնը այն ստուերով զոր կը ձգէ իրենց յօնքին կամարը, եւ կամ, մէկ կողմի վրայ դառնալով, յոգնեցուցիչ ու ֆլասարեր դիրքով կը նստին։

Ետեւէն եկած լոյսը անբաւական է, վասն զի կ'աղօտի այն ստուերով զոր գլուխն ու մարմնոյն վերին մասը կը ձգեն դէպ ի առաջ։ Աջեւ եկած շոյսը ձախեւ եկածին չափ քարեշարմար չէ, վասն զի գրող ձեռքին ստուերը կը ծածկէ այն կէտը որուն վրայ պէտք է նայիլ։

Վերջապէս, ուղղակի վերէն՝ ինչպէս ապակեւոր ձեղունէ՝ լուսաւորումը գանազան անպատեհութիւններ ունի, եւ յանձնարարելի չէ բնաւ։ Աշակերտը, այս պարագային մէջ կը բերուի իր գիրքը հորիզոնական բռնել որպէս զի ըստ կարելւոյն չափ լոյս ընդունի, եւ այս գիրքը ո՞չ միայն տեսողութեան այլ եւ ընդհանուր առողջութեան կը ֆլասէ. ասկէ զատ, գրքին սպիտակ մակերեւութէն ցոլացեալ լուսոյ ճառագայթները ուղղակի կը դառնան դէպ ի աչքը, եւ զայն կը շրայնեն՝ ինչպէս կը պատահէր երբ լոյսը գար ձիւղ դիմացէն։

Լուսաւորումը երկկողմանի կրնայ ըլ-

լալ, սլայմանաւ որ աջէն եկած լոյսը աւելի տկար ըլլայ քան ձախէն եկածը, եթէ ոչ կը պատճառէ կտրճատեցութիւն:

Ուրեմն ձախէն լուսաւորումը նախամեծար համարուելու է ամենէն:

Դասարանի մաքրութիւն. — Ով որ դիտած է, նկատած կ'ըլլայ անշուշտ թէ որչափ աղտոտ են մեր մանչ տղոց վարժարանները, եւ որչափ մաքուր աղջկանց վարժարանները. այս տարբերութեան պատճառը՝ եթէ մէկ կողմանէ աղջկանց բնական զգուշաւորութիւնը եւ վարժուհիներու մաքրասիրութիւնն է, միւս կողմանէ ալ տնտեսներու տգիտութիւնը եւ ուսուցիչներու անհագութիւնն է, որով կարեւորութիւն չեն ընծայեր մաքրութեան:

Մաքրութեան համար աւելի հակառակ է առողջապահութեան. աւելի կը յարուցանէ փոշիի փոթորիկ՝ որ կը լեցնէ դպրոցին մթնոլորտը. փոշին այդ կերպով չ'անհետանար, այլ կը տեղափոխուի օդին մէջ, ուրկէ կը վերադառնայ դպրոցական կարասիներուն վրայ, եւ այն բաւական ժամանակ ետքը, որով այդչափ ժամանակ ստիպուած կ'ըլլանք փոշելից օդ մը չնչելու:

Ուստի, փոխանակ աւելի, պէտք է յաճախ սրբել դպրոցը, եւ ժամանակ ժամանակ, հականեխական լուծամոմբ լուալ զայն ամբողջ իր պատերով. այս գործողութիւնը շատ դիւրին կը կատարուին, եթէ դասարանին պատերը իւղաներկ ըլլան եւ գետինը՝ փոխանակ տախտակի՝ աղիւսապատ ըլլայ:

Գրասեղան եւ նստարան. — Մեր դպրոցներուն մէջ, գրեթէ ամէն տեղ, գրասեղանք՝ իրենց նստարաններով՝ ողջապահիկ պահանջմանց համաձայն չ'իսուած չեն: Տղան է որ կը յարմարցնէ իր մարմինը անոնց եւ ոչ թէ անոնք են որ կը յարմարին տղուն. այս կարգի գրասեղանք գլխաւորաբար երկու թերութիւն ունին, այսինքն.

1. Գրասեղանին ու նստարանին բարձրութիւնը անհամեմատ են աշակերտաց հասակին հետ:

2. Գրասեղանին նստարանէն ունեցած հեռաւորութիւնը անկանոն է:

Այս երկու թերութիւններն են որ միանալով առաջ կը բերեն դպրոցական երկու չարիքներ. յոռի դիրք եւ կարճատեսութիւն:

Տղան՝ որուն հասակը յաճախ այնքան փոքր է որ չի կրնար պատշաճաբար հասնիլ գրասեղանին՝ նստած է դարանէն շատ հեռուն նստարանի մը վրայ. տեսէք, ինչ կ'ընէ. կրցածին չափ կը մօտենայ գրասեղանին. ասոր համար, կը նստի նստարանին եզերքին վրայ եւ դէպ ի առաջ կը ծռի: Զերծանելու համար արգելէն զոր դարանին շրթունքը աջ բազուկին դէմ կը հանէ, մարմինը դէպ ի աջ կ'ոլորի կարծես, ձախ արմուկը գրասեղանին վրայ կը դնէ, այս կերպով ձախ ուսը առաջ կուգայ ու վար կ'իջնէ. աջ արմուկը կողերուն վրայ կը դնէ, այս կերպով ալ աջ ուսը դէպ ի ետ կը մղուի ու կը բարձրանայ. գլուխը կ'ոլորէ, վար կ'իջեցնէ, մինչեւ ձախ ձեռքին կը հասցնէ, տետրակէն երեք չորս հարիւրորդամեթր միայն հեռու կը բռնէ:

Այսպիսի անյարմար դիրք մը որուն մէջ կը մնայ տղան օրական երեք չորս ժամու չափ, առաջ կը բերէ մարմնական տճեւութիւն, քանզի մարմնոյն ոսկորները դեռ իրենց վերջնական կազմութիւնը ստացած չեն. աչքերը՝ անհաւասար ու խիստ կարճ հեռաւորութեան մը մէջ բռննուելով՝ կ'աւրուին:

Նէօլաթէլցի տղեթէօր Կիյօմ վիճակագրութիւն մը ընելով՝ 350 մանչերու մէջէն 62ը ողնաթեք գտած է, եւ 381 աղջկանց մէջէն 156ը ողնաթեք: Գումարն ընելով կը տեսնենք որ 731 տղոց մէջէն 218ը մարմնական տճեւութիւն ունին: Զուրցերիոյ մէջ, 20 0/0 մանչ եւ 40 0/0 աղջիկ զուրկ են ուսերու բնական դիրքէն. անոնց մէկ ուսը վեր, միւսը վար է:

Եթէ այս մասին վիճակագրութիւն մը մեր մէջ ըլլար, արդեօք ի՞նչ մեծ թիւերու պիտի հասնէին այս համեմատութիւնը:

Դպրոցներու մէջ կարճատեսութեան գլխաւոր պատճառն է այն յոռի դիրքը

զոր վերը նկարագրեցինք. այդ դիրքին ազդեցութեան ներքեւ, աչքին առանցքը՝ առջեւէն դէպ ի ետեւ՝ կ'երկարի, աչքին կորնթարդութիւնը կ'աւելնայ. աչքին այս կազմական փոփոխութիւնը որ բուժելի է զառաջինն, եւ կամ անցողական է, մնայուն կ'ըլլայ եւ տծեւութիւնը կարճատեսութիւն կը դառնայ. եթէ ասոր վրայ աւելցնենք ուրիշ պատճառներ ալ որոնք դժբախտաբար պակաս չեն մեր դպրոցներուն մէջ, այն ատեն աւելի ապահովապէս կ'ունենանք կարճատեսներու ստուար խումբ մը:

Գերմանացի տոքթօր մը, Քոն, 10000 տղու վրայ զննութիւն ընելով գտած է որ 100 տղոց մէջէն 17ը տեսողութեան զանազան խանգարում ունէին:

Պէտք է ուրեմն բարեփոխել մեր դրասեղանաց ձեւը. բարեփոխութիւնը գլխաւորաբար երկու կէտերու մէջ կը կայանայ. 1. Գրասեղանին ու նստարանին բարձրութիւնները պատշաճեցնել աշակերտաց հասակին. 2. Նստարանը մօտեցնել գրասեղանին:

Դարանը հակեալ ըլլալու է 15—18 աստիճան, այնպէս որ տեսողութեան առանցքները գրեթէ 45 աստիճան հակեալ դիրք մը ունենան հորիզոնական դիրքէն վար:

Բարեձեւ ու բարեյարմար գրասեղան—նստարան մը շինել տալու համար, պէտք է առնել հետեւեալ չափերը.

1. Նստարանի բարձրութիւն. — Տախտակամածէն մինչեւ ծունգ:

2. Նստարանի շայնութիւն. — Բարձրոսկրին երկայնութեան երկու հինգերորդը:

3. Յեղանակի բարձրութիւն. — Որոշել նստարանէն վեր՝ մէջքին բարձրութիւնը, զոր չափելու է ազդրին երեսէն. այդ բարձրութեան վրայ աւելցնելու է մի քանի հարիւրորդամիւթ:

4. Դարանի ստորին եզր. — Տղան բարեյարմար նստարանի մը վրայ նստեցնել եւ գետնէն վեր չափել մինչեւ ստամոքսին խոռոչը:

5. Դարանին ու յեղանակին հորիզո-

նական հեռաւորութիւնը. — Մարմնոյն հաստութիւնը չափել եւ վրան աւելցնել մի քանի հարիւրորդամիւթ:

Եզրակացութիւն. — Հետեւաբար, դպրոցական միջավայրին ազդեցութիւնը ըստ կարելոյն նպաստաւոր ընելու համար տղուն ֆիզիքական զարգացման՝ դաստիարակը մէկ կողմանէ առողջաբանական պահանջմանց համաձայնեցնելու է հետեւեալ կէտերը.

1. Դասարանին տարածութիւնը,
2. Օդամաքրութիւնը,
3. Զեւեցումը,
4. Լուսաւորումը,
5. Մաքրութիւնը,

եւ միւս կողմանէ ջանալու է նուազեցնել անյարմար գրասեղանաց առաջ բերելիք մարմնական տծեւութիւնները եւ տեսութեան գործարանին խաթարումները:

Գ. Ա. ՄԱՆՍԵԱՆ

ԴԱՍԱԽՕՍԱԿԱՆ

ՄՏԱՄԱՐՁԱԿԱՆ ՇՐԱՀԱՆԳՆԵՐ

ՄԱՅՐԵՆԻ ԼԵՁՈՒԻ ՈՒՍՄԱՆ ՀԱՄԱՐ

Տարական դասընթաց

1. Հետեւեալ անուններուն մէջէն պէտք է որոշել անձ, անասուն կամ քոյս ցուցնողները, եւ կազմել նախադասութիւններ այսպէս. Բժիշկը անձ մ'է. Ոչխարը անասուն մ'է. Ծուշանը քոյս մ'է:

Բժիշկ (անձ). Ոչխար (անասուն). Ծուշան (քոյս). Երկաթագործ (անձ). Դեղագործ (անձ). Մանուշակ (քոյս). Ծներեկ (քոյս). Փիղ (անասուն). Զինուոր (անձ). Գերի (անձ). Եկքան (քոյս). Խոյ (անասուն). Մուկ (անասուն). Դռնապան (անձ), Աշակերտ (անձ). Թրթնջուկ (քոյս). Քարոզիչ (անձ). Ծխախոտ (քոյս). Պարկերէ (անասուն). Ծածան (անաս.). Ծիծեռնակ (անաս.). Նշենի (քոյս). Ժամակոչ (անձ),

Քած (անաս.) • Կաղամբ (բոյս) • Բաղեղ (բոյս) • Խոտ (բոյս) • Թիթեռնիկ (անաս.) • Մողէղ (անաս.) • Թաղական (անձ) :

2. Հետեւեալ խօսքերը մէկի վրայ ըսուած են, զանոնք շատի վրայ ըսելու է, այն է՝ եզակիները յոգնակի ընելու է. զոր օրինակ • Ուսուցիչը բարերար մ'է — Ուսուցիչները բարերարներ են :

Ուսուցիչը բարերար մ'է, — Աշխատողը մեղու մ'է, ծոյլը ձիաստաց մը, — Գիրքը բարեկամ մ'է, — Ծաղիկը պարտէզին զարդն է, — Շուներ տան պահապանն է, — Վանքը յաճախ ուխտատեղի մ'է, — Վազը անգութ կենդանի մ'է, — Զուլթակը երաժշտական գործիք մ'է, — Վարդը անուշահոտ ծաղիկ մ'է, — Եկեղեցին սուրբ տեղ մ'է, — Բոյնը թռչունին բնակարանն է, — Շերամը թրթուր մ'է :

Միջին դասընթաց

1. Ի՞նչպէս կ'ըսուի

Այն որ ոչխարները կ'արածէ (հովիւ), — Այն որ ջորիները կը վարէ (ջորեպան), — Այն որ էշերը կը վարէ (իշապար), — Այն որ կովերը կ'արածէ կամ կը պահէ (կովաւար), — Խոզերը (խոզաւար), — Այծերը (այծաւար), — Փիղը կամ փիղերը (փղապան), — Ուղտը կամ ուղտերը (ուղասպան), — Այն որ ագարակ մը կը բանեցնէ (ագարակապան), — Պարտէզ մը (պարտիզպան), — Այն որ անտառը կը պահպանէ (անտառապան), — Այն որ բաճարը (քանապան), — Այն որ աճիքը (անձնապան, քիկնապան), — Այն որ պանդոկ մը կը բանեցնէ (պանդոկապան), — Այն որ սրճարան մը (սրճարանապան), — Այն որ գինեւորան մը (գինեպան) :

2. Ի՞նչպէս պարտին ըլլալ հետեւեալ անձերը կամ իրերը, — Պէտք է յարմար ածական մը գտնել, եւ կազմել նախադասութիւն մը, այսպէս. — Դատաւորը պարտի անաչառ ըլլալ. — Բժիշկը պարտի ճարտար ըլլալ :

Դատաւորը (անաչառ) • Բժիշկը (ճարտար) • Նաւապետը (փորձ) • Զինուորը (ա-

րիասիրտ) • Վիրաբոյժը (ճարտար) • Մշակը (ծիր) • Ընդօրինակիչը (ուշադիր) • Բեռնակիրը (հուժկու) • Պահակը (արքուն) • Վկայն (ճշմարտախօս) • Քրիստոնեայն (մարդասեր) • Աշակերտը (հշու) • Հիւանդը (համբերասար) • Վաճառականը (պարկեշտ) • Աւանդապահը (հաւատարմ) • Հարուստը (ողորմած) • Ստորագրութիւնը (ընթերցիչ) • Երգը (ներդաշնակ) • Պատը (ուղիղ) • Հաշիւ մը (ճիշդ) • Եղէգը (ճասպակ) • Մարդու վարմունքը (ուղիղ) • Մեր խօսքը (ճշմարիտ) • Ծծուած օդը (մաքուր) • Խըմուած ջուրը (վճիտ) :

3. Սեռական հոլովով բառ մը յաւելցուցէ՛ք հետեւեալ անուններէն առաջ, յայտնելու համար թէ որո՞ւն կրնայ ըլլալ այդ բառերուն նշանակած իրը կամ յատկութիւնը կամ գործողութիւնը • Այդ սեռականը յատկացուցի՛չ կ'ըսուի • Ինչպէս • թոյլնոյն կտուցը • շան հաջիւնը, եւն :

— Կենդանոյ անուն • (թռչնոյն) կտուցը • (աքլորին) բրուկը • (ձիուն) ագին • (օձին) տտունը • (աղուէնին) պոչը • (փղին) կնձիթը • (հաւուն) հաւկիթը, ձուն • (ձիուն) գաւակը • (առիւծին) բաշը • (շան) ցուկը • (ձկան) փուշը, թեփը • (սագին) փետուրը • (ձիուն) սմբակը • (ոչխարին) գեղմը • (սոխակին) երգը • (եզան) եղջիւրները • (կատուին) կեղծաւորութիւնը • (սիրամարգին) հպարտութիւնը :

— Անձին անունը որ կը գործածէ այդ գործիքը • — (փայտահարին) տաւարը • (ձիաւորին) մտրակը • (ձկնորսին) ուռկանը • (նկարչին) վրձինը • (արտունձին) մանգաղը • (հովուին) ցուպը • (ծերունւոյն) գաւաղանը • (այգեպանին) յօտոցը • (կահագործին) սղոցը • (գերձակուհւոյն) մըկրատը • (հիւսան) ուրազը • (մաւաճառին) դանակը • (սրնգահարին) սրինգը • (ստայնանկին) կկոցը • (որսորդին) հրացանը • (սափրչին) ածելին :

Բարձրագոյն դասընթաց

Ա. Հետեւեալ ժողովրդական առածները մեկնել համառօտիւ •

1. Եղայ զաւիկի տէր, իյնայ զաւիկի տէր,

— Ձաւակները կրնան իրենց ծնողաց երջանկութեան կամ ապերջանկութեան, կանգնման կամ կործանման պատճառ ըլլալ, ըստ այնմ որ բարեպտուղ զաւակ ըլլան կամ գէշ, անառակ:

2. Ագոստին ընկեր եղողը նախնական դասերը նկատելու չե. — Ձեզմ ու մոլի ընկեր ունեցողն ինք ալ, կամայ ակամայ, ապականութեան մէջ կ'իյնայ:

3. Էջերն ալ Երուսաղէմ կ'երթան կողմէ. — Ի՞նչ օգուտ ճանապարհորդելէ մեծ ու նշանաւոր քաղաքներ, երբ մարդ օգուտ քաղել կարող չէ. թո՛ղ երթայ ո՛ր որ կ'ուզէ, Աթէնք կամ Բարիդ, Հռոմ կամ Լոնտրա, միշտ նոյն յիմարը ետ պիտի դառնայ:

4. Բանը բանելոյ, եշը բշելոյ առաջ կ'երթոյ. — Անդանդալ յարատեւելով, անընդհատ գործելով, քայլ առ քայլ՝ բայց անդու յառաջանալով է որ մարդ կը հասնի իր վախճանին:

5. Թե առողջ ես՝ ունեւոր ես, քե հիւանդ ես՝ չհաւոր ես. — Առողջութիւնը թանկագին գանձ մ'է, դրամագլուխ մը որով կրնայ մարդ աշխատիլ միշտ ու գոհացնել իւր պիտոյքը. իսկ հիւանդը՝ թէ եւ հարուստ՝ զրկուած է ամէն բանէ, աղքատին պէս ու անկէ ալ աւելի շատ բանի կարօտը կը քաշէ:

6. Իմ ու քու քանակը ե տուն. — Երբ ընտանիքի մ'անդամները փոխադարձ գոհողութեան ոգի չունենան եւ խօսիլ փնտեն՝ իւրաքանչիւրն իր շահը (իմ ու քու կը ըսելով միշտ), այն ընտանիքը թշուառութեան ու կորստեան կը մատնուի:

Բ. Հետեւեալ խօսքերը ընդլայնել կամ ամբողջացնել, յաւելցնելով լրացուցիչ մը

1. Որ սրտնաւոր ցուցնե. — Ապերախտութիւնը խորշելի բան է... (վասն զի անարգար ու անաղին է): — Մեր բնական տաղանդները կը ժանգոտին... (երբ մեր պատանութեան ատեն չեն մշակուիր): — Վերաւորիչ խօսքեր ըսելէ կ'զգուշանամ... (վասն զի մեր պարտքն է յարգել մեր նմանեաց զգայնութիւնը): — Շատ երկտաւարդք յաջողութիւն գտան

կենաց մէջ... (վասն զի պարկեշտութիւնը միացուցին աշխատասիրութեան): — Արարացիք ուղտը կենդանեաց պատուականագոյնը կը համարին... (այն մեծ ծառայութեան պատճառաւ զորս իրենց կը մատուցանէ):

2. Որ նպատակը ցուցնե. — Կապիկն ստեղծուած է նմանող ըլլալու, եւ մարդը... (իւր բանականութեամբն առաջնորդուելու համար): — Հարուստը կը ճամբորդէ զբօսելու համար, իսկ գիտունը... (սովորելու), — Ուսանողը, կարգացէք լաւ հեղինակները... (ձեր միտքը մշակելու եւ ձեր ճշակին տգնուացնելու համար): — Պէտք չէ ապրիլ ուտելու, այլ պէտք է ուտել... (ապրելու համար): — Յարգէ՛ նախ դու զքեզ... (որպէս զի յետոյ այլք յարգեն զքեզ):

Ծանօթ. — Լեզուին ուսումը պէտք չէ ըլլայ չոր ու ցամաք ուսում մը կանոններու, այլ մարդանք մը մտածման ու աւոր արտայայտութեան: Պէտք է տղուն գաղափարներ տալ՝ անոնց յայտարար բառերն ու բացատրութիւնները սովորեցնելու կամ գտնել տալու համար, եւ բառեր ու խօսքեր տալ ու բացատրել՝ անոնցմով գաղափարներ հաղորդելու եւ մտածել դրդելու համար: Քերականութիւնը «ուղիղ խօսելու եւ գրելու արուեստն է», այո՛, բայց ուղիղ խօսիլ եւ գրել կ'ենթադրեն ունենալ գաղափարներ ու լծորդել զանոնք: Լեզուն դործիք մ'է մտածման բացատրութեան, պէտք է մտածել ու բացատրել միանգամայն սովորեցնել, նիւթն ու ձեւը իրարմէ չբաժնել: Լոկ բառից վերջաւորութեանց եւ անոնց իրարու հետ համաձայնութեան կամ խօսքին մէջ բռնելիք կարգին վերացեալ ուսումը լեզուի ուսում, քերականութիւնն է: Խօսքի ատաղձները պիտի պակսին միշտ: — Վերագրեալ հրահանգաց պէս վարժութիւնք, որոցմէ մերթ ընդ մերթ նմոյշներ պիտի տամք, լեզուին ուսումը դուրս կը հանեն աւանդական մեքենականութենէն, կը հետաքրքրեն տղան, կը գրգռեն միտքը խոր-

հելու, բաղդատելու, դատելու, գողա-
փարաց պաշարին հետ տղուն բառարանը
կը ճոխացնեն, բացատրութեան եղանակ-
ները կը շատցնեն ու կը դիւրացնեն, թե-
րի ու աղաւաղ կերպերը կ'ուղղեն, տու-
կաւ լեզուին տէր կ'ընեն զինքը: Բայց
կարեւոր պայման է անշուշտ որ ուսու-
ցիչք փոյթ ունենան որ ամէն բառ բա-
ցատրուի, ամէն գողափար որոշապէս
սահմանուի, ամէն դատողութիւն իմաս-
տասիրուի, իրենց ու աշակերտաց մէջ
հարցմանց ու պատասխաններու միջո-
ցաւ:

Բ. Յ. Պ.

ԳՐԱԲԱՐԻ ՈՒՍՄԱՆ ՀԱՄԱՐ

(Բարձրագոյն նախակրթարան)

Իցէ տեսեալ յորժամ հրդեհ զմեծամեծ
տանց հարկանիցի, զիւնրդ ցոլանայ բոցն
և ծուխն և անոր յերկինս կցի, և չիք
որ ժող մատչել և զջարն շիջուցանել:
այլ ամենայն որ ընդ անձին ճեպի և
զիւրն միայն դիտէ. և հրդեհն ոչ մեղ-
մով, այլ սաստիկ զամենայն ճարակեա-
ցի. և բազում անգամ ամենայն քաղաքն
շուրջ կայցէ և տեսողք և եծ չարեացն
լինիցին, և ոչ զօրավիգն և օգնականք:
Եւ անդ իցէ տեսանել զի ոչ ինչ օգուտն
լինիցին որ շուրջն կայցեն. այլ իւրա-
քանչիւր որ զձեռս ձգիցեն, և նոցա որ
առ ժամայն իցեն եկեալ՝ զտեղի իմն
ցուցանիցեն, կամ ընդ պատուհանս զբոցն
ցոլացեալ, կամ զգերանսն որ հապ կի-
սայրեաց անկանիցին, կամ ողջոյն իսկ
զփողոցսն որ միանգամայն ի սեանցն և
ի մութից զերծանիցին և յերկիրն կոր-
ծանիցին: Իցեն թերեւս և բազումք յան-
դգունք և ի վտեր եկեալք՝ որ և մօտ իսկ
մտիցին ի հրդեհ շինուածոյն հասանել.
ոչ զի ձեռն տայցեն և զջարն շիջուցա-
նիցեն, այլ զի ցանկալի իմն զտեսիլն
համարիցին յորժամ ի մօտոյն ստոյգ կա-
րիցեն նշմարել, որոց մինչ ի բացեայն

կային՝ չերեւէր այնպէս: Եւ եծէ գեղե-
ցիկ ևս և մեծամեծ շինուածքն իցեն,
զայն համարին եղուկ և ողորմ, բազում
արտասուաց արժանի: Նա և է իսկ ո-
ղորմ տեսիլ. քանզի սիւնքն հանդերձ
ախաւեղագէս խոյսկօքն մանրիցին և ի
յատակսն կործանիցին. և իցէ ինչ բա-
զում զոր ինքեանք բեկտիցեն, կէսն ի
հրոյն այրեսցի և զկէսն շինողացն ձեռ-
քն մղիցեն ընկենուցուն, զի մի ևս քան
զեւ սաստիկ ջամբ հրոյն լինիցի: Անդ
իցէ տեսանել և զբազում պատկերսն զոր
ազգի ազգի նկարուք քանդակեալ դրօշ-
եալ, յորժամ ձեղունքն բանայցեն և
մերկ յարկացն լինիցին, բազում անշը-
քութեամբ մերկացեալ խանձատեալ նը-
շաւակ կացցեն. և զազգի ազգի զհան-
դերձսն, և զոսկեղէն և զարծաթեղէն
անօթսն, զոր յանկարծ ուրեք տանու-
տէրն հանդերձ իւրով միայն ամուսնոյն
տեսանէր, սապատք հանդերձիցն և խըն-
կոցն կաշարայք ի մարմարակուռ սեն-
եակսն յերմիներին կճէիցն դրուագացն՝
ամենայն միանգամայն ի միոյ հրոյն
գռեհիկ կանառանոց լինիցի: Եւ հասանէ
տեսանել այնուհետեւ աղբակիրս, որ-
թաւորս, թիւաւորս, զամենեսեան խառն
և անհարց ի ներքս մտեալ: Եւ այլ ինչ
ոչ իցէ անդ տեսանել, բայց միայն ջուր
և հուր և կաւ և մոխիր և զփայտսն
թերայրեացս:

Յ. ՈՍԿԵՐԵՐԱՆ

ԱՇԽԱՐՀԱՔԱՐ ԲԱՐԳՄԱՆՈՒՅԻՆ

Տեսնած էք, երբ մեծամեծ տուներ կը
հրդեհին, ինչպէս բոցն ու ծուխը կը ցո-
լանան և մինչեւ երկինք կը բարձրանան,
և ոչ որ կը համարձակի մօտենալ և չա-
րիքին առաջն առնուլ. այլ ամէն մարդ
իւր անձը կը հոգայ փութով և իրեն վե-
րաբերեալ բաները միայն կը նայի. և
հրդեհը ոչ թէ մեղմով, այլ սաստկու-
թեամբ կը լսփէ ամէն բան. և շատ ան-
գամ բոլոր քաղաքին մարդիկը շուրջը
կը կենան և հանդիսատես միայն կ'ըլլան
այդ աղէտքին, ոչ թէ օգնութեան հապ-

նող: Եւ կը տեսնես որ զայն շրջապատողներն բնաւ օգուտ մը չունին, այլ ամենքն ալ, ձեռքերնին երկնցունելով, նոր եկողներուն այս ինչ տեղը կը ցուցնեն, կամ պատուհաններէն փայլող բոցը, կամ արագ արագ կիսայրեաց կործանող գերանները, կամ նոյն իսկ բոլոր պատշգամները որ ամենքը մէկէն սիւններէն և մոյթերէն կը քակուին և գետին կ'իյնան: Թերեւս ըլլան նաեւ շատ յանդուգն մարդիկ, որ համարձակին շէնքը վառող հրդեհին մօտենալ, ոչ թէ օգնելու և չարիքը խափանելու համար, այլ որովհետեւ տեսարանը աւելի գեղեցիկ կը համարին, երբ մօտէն աղէկ մը կարեւան դիտել, իրենք որ հեռուն կեցած ժամանակ՝ այնպէս չէին կրնար տեսնել: Եւ եթէ շէնքերն ալ գեղեցիկ ու մեծ ըլլան, կ'ըսեն թէ խեղճ բան է, լալու բան է: Եւ իրաւ ալ ողորմելի տեսարան է: Վասն զի սիւններն իրենց խոյակներովն կտոր կտոր կ'ըլլան և գետինը կը կործանին. և շատ բաներ ալ իրենք կը կտորեն, մէկ մասը կրակէն կ'այրի, միւսն ալ գործաւորներուն ձեռքերը կը հրեն կը կործանեն, որպէս զի կրակն հետզհետէ աւելի շատ ճարակ չգտնայ: Կը տեսնուին նաեւ հոն շատ մը պէս պէս յօրինուած քանդակուած արձաններ, որք, երբ ձեղունները կը բացուին և առանց յարկի բաց կը մնան, խեղճ ու անզարդ, մերկ և խանձած վիճակի մէջ կ'երեւին, և այն տեսակ տեսակ հանդերձներն և ոսկի ու արծաթ անօթներն, զոր տանուտէրը միայն իւր ամուսնոյն հետ և այն՝ շատ քիչ անգամ կը տեսներ, գոյնզգոյն կճեայ դրուագներով զարդարուն մարմարակուռ սենեակներուն մէջ եղող զգեստներու արկղերն և խունկի ամաններն, ասոնք ամենքը միանգամայն, հրդեհին շնորհիւ, զուհիիկ հանդիսատեղի մը կը դառնան: Այլ այնուհետեւ կը տեսնես աղբակիրներ, որթաւորներ (կոշտիակիր), Թիաւորներ (քանոյ աշխատող) որ ամենքն ալ խառն ի խառն առանց բաշուելու ներս կը խուժեն: Եւ հոն այլ եւս ուրիշ բան չի տեսնուիր՝

բայց միայն ջուր, կրակ, կաւ, մոխիր և կիսայրեաց փայտերն:

Բացատրութիւնք

1. — Իցէ՞ սեսեալ. Երբեմն անցեալ ընդունելութիւնով կազմուած բաղադրեալ ժամանակներուն դերանուն տէր բային լռելեայն կ'իմացուի: Հոս զեղջուած է ձեռ կամ բո:

2. — Զսանց հարկանիցի. Հարկանել զով բացառական առած, առանձինն ասացուած, որ կը գործածուի երբ խնդիրը հրոյ, բոցոյ եւայլն, պատելու, բռնկելու վրայ է: Իսկ Հարկանել, զարկանել, զարնել նշանակութեամբ, զով սեռական կ'առնուն խնդիր. օր. Հարկանել զքարի, զգրի, զարկանել զգետնի: Իսկ Հարկանել, վարսել նշանակութեամբ, կ'առնու իւր խնդիրը ի ով տրական. օր. Հատեալ զգըլուխ նորա՝ Հարին ի նիզակի:

3. — Ժսել, Համարձակիլ, երեսը պինդցնել. Ժիս, Համարձակ, պինդ երեսով:

4. — Ընդ անձին ճեպել. փութով իւր անձը հոգալ:

5. — Քաղաքն շուրջ կայցէ եւ սեսող... լինիցին. Քաղաք տէր բային, իբրեւ բազմութիւն ներկայացնող բառ, կցուած է երկու բայերու, մին եզակի, միւսն յոգնակի:

6. — Զօրավիզն եւ օգնականք. Դիտելու է որ գոյական թէ՛ ածական, բայ թէ՛ մակբայ, շատ անգամ երկու կամ աւելի հոմանիշներու կրկնումն վայելուչ կերպով գործածուած է ընտիր մատենագիրներէն:

7. — Զօրավիզն, լաւ եւս զօրաւիզն. զօր եւ աւգն (օգն) բառերէն կազմուած:

8. — Իցեն եկեալ, եւայլն. Դիտելու է որ, այս հատուածին մէջ, բայերը սահմանականի տեղ ստորադասական եղանակ դրուած են. այս եղանակն է որ կը գործածուի ենթադրութիւն, տարակոյս, նմանութիւն, բաղդատութիւն ցուցնող խօսքերու մէջ, որպիսի է ներկայ հատուածն:

9. — Յորժամ ի մօտցն. Յորժամ, որպէս, ուր, որչափ, զի, զիարդ, մինչ բառերէն անմիջապէս ետքը եկող բառին վրայ ա,

դ, 6 յօդերէն մին կը դրուի, վասն զի այդ բառերէն յառաջ կ'ենթադրուին լռելեայն իմացուած ուրիշ բառեր, որ պիտիք են յայնժամ, այնպէս, անդ, այնչափ, այնու, կամ վասն այնր, այնպէս, յայնժամ:

10. — Մինչ ի բացեայն. նոյն ընդ վեր:

11. — Եւ եթէ գեղեցիկ եւս եւ մեծամեծ շինուածքն իցեն. եթէ, թէ, յորժամ չաղկապներով սկսուած նախադասութեանց բայն յաճախ վերջը կը դրուի:

12. — Բեկեկ. կտոր կտոր ընել: Դիտելի է որ առել, ոտել, տել (հասանելի արմատ՝ բայի վերջաւորութեան հետ կըցուած) արմատին վրայ սաստկութեան, յաճախութեան գաղափար մը կը յաւելուն. Այսպէս են քակել, քակեցի, խանձել, խանձեցի. խոցել, խոցեցի. ձգել, ձգեցի. խաժանել, խաժանեցի, եւ այլք:

13. — Ջամբ հոյն լինիցի. Յաճախ ընտիր մաստենագիրք բաղադրեալ սոսայուածի մը մասերը զատելով՝ անոնց մէջ կը դնեն մէկ կամ աւելի խնդիրներ, ինչ որ շատ վայելուչ է. օր. Ձիք ինչ որ գամագիտ այնմ վաճանի լինիցի: Արգել հայելոյ ի յստակութիւն լուսոյն լիցին: Մերկ յարկացն լինիցին:

14. — Մերկ յարկացն լինիցին. Յ, 6 տառերով սկսող բառերու առջեւ ի կամ յ նախդիրները կրնան յապաւիլ:

15. — Ձոր ազգի ազգի նկարում քանդակեալ դրօշեալ. Անցեալ ընդունելութիւնով եւ էական բայով կազմուած բաղադրեալ ժամանակներուն մէջ երբեմն, երբ անորոշ կամ ընդհանուր իմաստով գործածուած են, էական բայն կը զեղչուի. հոս իցէ լռելեայն կ'իմացուի, ինչպէս նաեւ տէր բային ուրում կամ այլոց, որոյ մասին տես ծան. 1:

3. ՍԵՅԵԱՆ

Կ Ի Ր

ԻՐԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍ

Տղաքս, կրնա՞ք ըսել ինձ թէ ի՞նչ կը կոչուին այն ճերմակ քարերն որոց մէջ կիր կը գտնուի: — Այո՛, ուսուցիչ, կրային քարեր կը կոչուին: — Լա՛ւ, կիրը շատ օգտակար նիւթ մ'է, հողին մէջ առանձինն չի գտնուիր, միշտ ածխական թթուի հետ միացած է: Ի՞նչ է ածխական թթուն: — Ուսուցիչ, կազ մ'է: — Այդ կազը յառաջ կուգայ երբ մարմին մը, օրինակի համար ճրագը, այրի, երբ կենդանի մը շնչէ, եւ կամ գինին տակառներու մէջ խմորման ենթարկուի: Ուրեմն կրային քարի մը մէջ ի՞նչ նիւթեր կան: — Կիր եւ ածխական թթու: — Լա՛ւ, այսպէս մարմարինը, կաւիճը, շինութեան քարը եւ կրաքարը կրային են: — Ուսուցիչ, ի՞նչպէս պիտի կրնանք ճանչնալ կրաքար մը: — Տղա՛քս, փոքրիկ փորձով մը պիտի կրնաք կրային քար մը ճանչնալ. գաւաթի մը մէջ, կաւիճի փոշի դրէք, եւ վրան ալ պարպեցէք զօրաւոր թթու մը, օրինակի համար քացախ, այդ խառնուրդէն յառաջ պիտի գտնուի կազային պղպղջակներ որոնց եթէ վառած լուցիկ մը դպցնէք, իսկոյն պիտի մարի: Կիրին մէջ եղող ածխական թթուն է որ դուրս կ'ելնէ: — Ուսուցիչ, ի՞նչպէս կրաքարէն կիր կը պատրաստեն: — Տղա՛քս, 3 մեթր բարձրութեամբ աղիւսէ փուռերու մէջ կը դնեն կրաքարերը եւ զանոնք կ'ենթարկեն ամենաբարձր աստիճան ջերմութեան մը: Վառարանը վարի կողմը կը գտնուի. փուռին բերանը վերի կողմն է ուսկից կը լեցնեն քարերը: Կողմնական դուռներուն փուռը՝ այրումէն վերջ կիրը դուրս հանելու համար: Այրումը՝ տեղի կ'ունենայ, կազը դուրս կ'ելնէ, կը մնայ կիրը: Որչափ կիր դուրս հանեն այնքան կրաքար կը լեցնեն փուռին մէջ, այսպէս գործողութիւնը կը շարունակուի: Գիտէ՞ք թէ կիրը քանի՞ տեսակ է: — Այո՛, ուսուցիչ, երկու տեսակ. մարած կիր եւ

չմարած կիր: — Լա՛ւ, եթէ կիրը մասնաւոր աւագաններու մէջ դնեն, եւ անոր վրայ մեծ քանակութեամբ ջուր լեցնեն իսկոյն կը տաքնայ, կը բորբոքի, կ'այրի եւ փոշիի կը վերածուի: այս է մարած կիրը, որ գործողութեան ենթարկուելէ առաջ, չմարած էր: Մարած կիրը եթէ ջրով եւ աւագով խառնուի, մածուցիկ խմոր մը կը գոյանայ, որուն շաղախ անունը կուտանք, ասի շէնքերու մէջ կը գործածուի, որմերը, քարերը այս նիւթով իրարու կցուած են այնքան պինդ կերպով, որովհետեւ չաղախը օդին ազդեցութեամբ կը կարծրանայ, գիտէ՞ք ինչու: — Ո՛չ, սուսուցիչ: — Ի՞նչ կար չաղախին մէջ: — Կիր: — Այդ կիրն է որ օդէն ածխական թթու կազը կ'առնու, անոր հետ կը միանայ եւ կը լինի կրաքար: Եթէ կրաքարը իւր մէջ կաւ պարունակէ եփու մէն վերջ, այնպիսի նիւթ մը կը լինի որ կիրին ազդեցութեամբն ալ աւելի կը կարծրանայ, անոր համար կաւախառն կիրէ կը շինուին բոլոր կամուրջները, ջրամբարները, հիմունքն այն շինուածոց որք խոնաւ ու թաց հողի վրայ պիտի կառուցուին:

Կիրը միայն շինութեանց մէջ կը գործածուի: — Ո՛չ, բայց կ'ուզենք գիտնալ թէ որո՞նք են անոր միւս գործածութիւններն: — Լա՛ւ, տղաքս, երկրագործութեան մէջ մեծ օգուտներ ունի նա, ի՞նչ հրաշքներ կը գործէ այն ամէն դաշտերուն մէջ ուր մեծ քանակութեամբ վընասակար խոտեր կան: Իւր բարերար ազդեցութիւնը աղբերու վրայ եւս ի գործ կը դնէ, զանոնք ամէն բոյսէ դիւրաւ ծծուելու վիճակի մէջ կը դնէ, այսպէս անուզողակի կերպիւ բոյսերուն տեսակ մը սնունդ կը լինի:

Ե՛ւն, Պէտք է որ ուսուցիչը դասարանի սեւ տախտակին վրայ գծագրէ փուռի մը պատկերն ուր կիր կը պատրաստուի: աշակերտաց կրաքարը ճանչցնելու համար կաւիճի եւ քացախի դիւրին փորձը կատարէ գաւաթի մը մէջ: Աշակերտաց հարկ է նաեւ ցուցնել կաւիճի, մարմարիոնի, շինութեան քարի, կրաքարի օրինակներ, ինչպէս նաեւ չաղախ եւ կաւախառն կիր:

Մ. Գ. ՄՈՋԵԱՆ

Ծ Ա Ղ Կ Ո Ի Ն Ք

ՕՍՄԱՆԵԱՆ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ

(Ի պէս երկրորդական վարժարանաց)

ՄՈՒԱԼԼԻՄ ՆԱԶԻ

Նաճի էֆէնտի Արաբական 1266 թուականին ծնած է ի Պոլիս, եւ 1310 տարւոյ Րէմագանի 27րորդ օրը շնչադադարէնէ մեռած է: Իւր բուն անունը «Էօմէր» է, սակայն «Նաճի» զարդանուամբ գրական ասպարէզը եղած է: 1284 թուականին Վարնայի երկրորդական վարժարանի երկրորդական ուսուցիչ, հետզհետէ յառաջանալով մինչեւ պետական իրաւագիտական եւ Սուլթանիյեէ վարժարանաց մէջ Օսմանեան գրագիտութեան եւ մատենագրութեան ուսուցչութեան աստիճանին կը բարձրանայ: Կառավարական պաշտօնատանց մէջ Քարտուղարի, Թարգմանչի եւ Դիւանապետի պաշտօններ նաեւ վարած է, եւ ի վերջոյ «Թէրճէմանը Հագիգաթ» լրագրի խմբագրապետ եղած: Պարսկերէն եւ Արաբերէն լեզուաց շատ հմուտ ըլլալէ զատ գաղիերէն լեզուի եւ գրականութեան եւս ունեցած հմուտութիւնը միշտ կը մշակէր: Նաճի էֆէնտի արժանիքը կը գնահատուի նոյն իսկ Սթոք-հոլմի մէջ գումարուած «Արեւելեան լեզուաց գիտնոց կաճառէն» որ զինքը սակեայ միտալով մը պատուած է: Ուսումնասէր եւ յառաջդիմասէր ինքնակալն մեր Օգոստոսիան Սուլթան Ապա-իւլ-Համիտ Բ. Կայսրն զինքը 1307ին Թարիխ-նիւլիսի աշի Օսման՝ այն է Օսմանեան զարմի պատմագիր տիտղոսով փառաւորեց եւ իւր կուրծքը սակեայ միտալով մը զարգարեց: Բոլոր գրագիտաց մէջ «Մուալլիմ» մակդիրով կը յորջորջուէր:

Նաճի, ո՛չ այնքան երկայն հասակաւ, բաւական մարմնեղ, գիրուկ, բարձրաճակատ, քիչ մ'ալ շիւ, կլոր գէմքով, սեւ մազով ու մօրուսով, միշտ ժպտուն եւ զուարճախօս անձ մ'էր:

Մուսլիմ Նաճի էֆէնտի թողած է արձակ եւ ոտանաւոր երկասիրութիւններ, տպագրեալ, որք հետեւեալներն են:

Արձակ. — Սանիզաթ իւլ Արէս (արտադրութիւնք Արաբաց), Հիքէմ իւր Րէֆաի (իմաստուն բանք Րէֆաիի), Նէվատիր իւլ էքեսապիր (հազուագիւտ բանք մեծամեծաց), Սաիպտէ սէօզ (բանք Սաիպի), Միւթէրճիմ (թարգմանիչ), Մէտրէսէ խաթըրէլէրի (գարոցական յիշատակք), Լուղէթ (բառագիրք), Մէճմուսյի Մուսլիմ (Մուսլիմի Հաւաքածոյն), Ըսթըլահաթը էտէպիյեէ (գրագիտական ասացուածք), Նիւմուների սիւխէն (նմոյշ խօսից), Էսամի (անուններ), Օսմանը շաիրէրի (Օսմանցի բանաստեղծք), Մուխապէրաթ (թղթակցութիւնք), Մէքթուպլարըմ (նամակներս), Ինթիգատ (քննադատութիւն), Շէօյլէ պէօյլէ (սապէս նապէս), Խուրաթֆիւրուշ (մանրավաճառ), Մուսլիմ (ուսուցիչ) եւ դեռ ուրիշներ:

Ոսանաւորք. — Աթէշփարէ (հրահատ), Շէրարէ (կայծ), Ֆիւրուզան (լուսաւոր), Սիւնպիլէ (բողոք), Համիյեթ (մարդասիրութիւն), Թէրճիպէնտ (ծայրայնագ):

Իւր ոճը միշտ ներդաշնակ ու սիրուն, պարզ կամ զարդարուն է ըստ նիւթոյն:

Ահաւասիկ «Ըսթըլահաթը էտէպիյեէ»էն հատուած մը որ Լամարթինէ թարգմանուած է:

Միւնանաթ

Վագթը դուրուպ հուլուլ իծմիշ: Արթըզ՝ շէհրիյեարը շաշաւպարը նէհար⁽¹⁾, կէրտունէյի գաֆէր շիարընտան, քէմալի ազամէթ ու վէգար իլէ ինիյեօր:

Վէճհի ըսխշանընը, էնգարտան նիհան խտէն, սէհապէյի թապան, ասիւմանտա պըրագտըղը մէմտուտ ու գէրէնտուտ իզլէրի մուհաֆազա իծմէքլէ պէրապէր, ինիքեսասթը էրդէվանիրէնկ իլէ, աֆագը միւսթաղրագը էնվար իլէյօր:

Իւր հեղինակութեանց նիւթը օտարներէ առած չէ, այլ իր ազգէն ու միջավայրէն: Իր այս այլեւայլ գործոց մէջ Արաբ եւ Պարսիկ ընտիր մատենագրաց իմաստուն խօսքերը եւ ընտիր մասերը հաւաքած ու մեկնած է, իւր մանկութեան յիշատակները սիրուն կերպիւ պատմած է, ինչպէս նաեւ Օամ. Հին մատենագրաց կեանքը՝ անոնց գործերէն մէկ մէկ նմոյշ յառաջ բերելով Հին ու նոր ոճերու քննադատական բաղդատութիւնն ըրած ու գըրական ճաշակի կանոնները աւանդած է: Իւր բանաստեղծութեանց գրեթէ ամէնքն ալ քնարերգութիւններ են, յորս իմաստասիրական շունչի մ'ընթանալը կ'զգացուի, ուրախութեան եւ տխրութեան չեչտերու, երիտասարդութեան եւ Գարնան շնորհաց նկարագիրներու մէջէ: Իւր ոտանաւոր գրուածոց ամենէն ընտիրները «Աթէշփարէ» տիտղոսով հրատարակեալ հաւաքածոյին մէջ կը գըտնուին:

Ընթերցողք որպէս զի Մուսլիմ Նաճի էֆէնտի ոճին ծանօթանան, իւր թէ արձակ եւ թէ ոտանաւոր ընտիր գրական երկասիրութեանց եւ թարգմանութեանց ընտրեւագոյններէն մի քանին հետզհետէ պիտի դնենք:

مناجات

وقت غروب حلول ایتش. آرتق شهریار
شعشعه بار نهار (۱) کردونه ظفر شمارندن
کمال عظمت و وقار ايله اينور.

وجه رخشانى انظاردن نهان ايدن سحابة
تابان آسائنده براقدینی ممدود وزراندود ايزلری
محافظه ایتکله برابر انعکاسات ارغوانی رنگ
ایله آفاقی مستغرق انوار ایلور.

(1) شهریار شمعشعه بار نهار

Քիւրէյի գամեր իսէ, գուպպէյի ֆիյ-
րուզէֆամ իշինտէ, մուսլլագ պիր ֆա-
նուսը զէրինյն կիպի, ուֆուզուտ ճիլվէ-
նիւմա օլույօր:

Փէրմէվի լաթիֆի, չէմէնզար իւզէրինէ
պիթապանէ տիւշտիւլի հալտէ, փէրտէյի
ճիհանփուլը լէյլ, տաղ պաշլարընը էօր-
թէրէք, սամհը սահրաեսա տօղրու մէյլ
իտիյօր:

Պու սաամ, թապիսմըն հուլուլ իթ-
մէքտէ օլան, կիճէ իլէ թէպսուտ իյլէ-
մէքտէ պուլունան կիւնտիւզ պէյնինտէ
իքթիսապը շէվզը ճէտիտ վէ խալիգի
լէյլունէհարէ տօղրու, բէֆի բուլի իւմիտ
իտէրէք, պիր լիսանի պէլիլ իլէ, գուտ-
րէթի ֆաթիրէսինէ զարշու(2) միւթէհայ-
եիրանէ արզը թազիմսմը մուգաստէսէ
իյլէտիյի սաամ տըր:

Բառագիտութիւն

مناجات աղերս (միայն աղօթքի պահուն
առ Աստուած ուղղուած աղերսին կ'ըս-
ուի):

وقت غروب արեւուն մարը մտնելու ա-
տենը (հականիշը طلوع արեւու ծագ-
ման ատենը):

شهریار گلشنه گلشنه քաղաքի արմատական
աներեւոյթ է զոր օր. ظننه զնշը զէլզէլէ
Թանժանա ترجمه թէրճէմէ վէսվէսէ):

کردون (کردون) յաղթական կառք (ظفر شعار
երկինք): کمال عظمت و وقار الله կատարեալ
վեհուծեամբ և լրջութեամբ:

وجه رخشان պայծառափայլ երես (պարս-
կերէն օրինօք թէրքիպի վասֆի — ա-
ծական գոյական — է):

انظاردن نهان ايتك անտես ընել,
ծածկել (نظر նազար տեսութիւն, աչք):

سحابه نمان շողաւոր ամպ (թէրքիպի վաս-
ֆի է, գոյականին (մէվսուֆ) ծայրը ան-
ճայն (ء) գտնուելուն համար (ء) մը եկած
է որպէս զի էսրէն կարգացուի):

ممدود երկարեալ, երկար (եռագիր ար-
մատը مد մէտու է):

کره قرایسه قبه فیروزه قام ایچنده معلق
բրֆանոս շրին կի օֆքե յլուեմա օլուր:

پرتو لطیفی چمنزار اوزرینه بی تابانه
دوشدیدی حالدہ پرده جهانپوش لیل طاغ
باشلرینی اورتهرك سطح صحرايه طوغری
میل ایدیور:

بو ساعت طبیعتك حلول ایتكده اولان
کیچه ایله تباعد ایلمکده بولتان کوندوز بیننده
اکتساب شوق جدید و خالق لیل ونهاره
طوغری رفع روی امید ایدرك بر لسان بلایغ
ایله قدرت فاطره سنه قارشى (۲) متحیرانه
عرض تعظیبات مقدسه ایلدیکی ساعت در:

زراوند (اندود) ոսկեգօծ ծեփած
դիրանեգոյն ցոյացումներ
արցուն է արցուն արմատը (անկաս)
էրդէվան շէփորուկ, կարմիր ծաղկով
տունկ մ'է):

آفاق مستغرق انوار الملك
բու մէջ ընկղմել (ոլֆուզ եզակին է.
ընդունելութիւն անցեալ (իսմի
մֆուլ) է. յաւելական աներեւոյթը
իսթրաֆարգ. եռագիր արմատը
գարգ Գրգ եզակին տուր է:

فیروزه) կապտագոյն կամար
նոյն է ընդ քիւրուզէ. բառը
գոյն ցուցնող անուանց վերջը կը կցուի
զոր օր. سیه قام սիւէհֆամ սեւագոյն):

قانونس (قوانیس) ֆէվանիս յոգ.
կախուած (ընդունելութիւն անցեալ.
յաւելական աներեւոյթը Թալիգ կա-
խել):

جلوه نما اولقى առաջին անգամ երեւան
գալ (جلوه نما) վասֆը թէրքիպի է: Պարս.
օրինօք պարսկ. բայի մը հրամայականը
պարսկ. կամ արաբերէն գոյականէ մը
վերջը դրուելով կրնայ վասֆը թէրքիպի

(2) قارشى փոխ. գրելու Կարշու Մուսլլիմ Նաճի էֆէնտի գրեթէ առաջին հանդիսացած է ուղղագրութեան մէջ
նմանօրինակ նորութիւններ մտնելու մասին:

(բարդ ածական) շինուիլ զոր օր • حیرت
հայրէթնիւմա զարմանալի معارفور մէա-
րիֆ փէրվէր ուսումնասնոյց وقعه نویس վա-
գանիւվիս ժամանակագիր) :

زار (արդար • چمنزار մարգագետին
պարսկ • տեղական մասնիկ մ'է. զոր օր •
كلزار կիւզար, վարդանոց) :

توبه (կարողու-
թիւն ۛ պարսկ • բացասական մասնիկ է,
գոյականի սկիզբը կը դրուի եւ զայն բա-
ցանական ածականի կը վերածէ զոր օր •
چاره դարման ۛ بيماره անդարման շիւ-
մար ۛ بيشمار պիշիւմար անթիւ) :

چراغ جانيوش ليل
զերուան վարագոյրը (چوش ծածկէ, ա-
ներեւոյթը پوشيدن փուշիտէն ծածկել) :

صخره
կացուցիչ յատկացեալ է تركيب կամ
تركيب Թէրքիպի իգաֆի է) :

اتك (եռագիր արմատը
بد պուտ հեռաւորութիւն է) :

شوق جديد
նոր եռանդ ստանալ (كسب ۛ
كسب ۛ եռագիր արմատը ۛ اكتساب) :

رفع روى اميد
բարձ-
րացնել (رفع բարձրացնել) ۛ بلوغ
պերճա-
խօս (بلوغ պէլուղէթ պերճախօսութիւն) :

قدرت فاطمه
ստեղծիչ կարողութիւն
(Թէրքիպի վասֆի է, ածականը գոյակա-
նին հետ համաձայնած է, գոյականը ի-
գական է որովհետեւ աւելորդ (ت)ով վեր-
ջաւորած է, ածականն ալ իգական եղած
է ըստ արաբական համաձայնութեան
կանոնին) :

مختياره
զարմացած (յաւերական անե-
րեւոյթն է ۛ تحير Թէհայեիւր զարմանալ) :

عرض تعظيما
նուիրական մե-
ծարանք յայտնել (تعظيم եզակին
եռագիր աներեւոյթը ۛ عظمت է) :

مقدس
ընդունելութիւն անցեալ. յաւե-
րական արմատը تقدیس Թագտիս է :

Թարգմանութիւն

Ա Ղ Օ Թ Բ

Արեւամայրի ժամն հասած է : Ա' Լ ցե-
րեկի փառապանծ արքայն իւր յաղթա-
կան կառքէն կ'իջնէ մեծավայելուչ եւ
վեհաշուք : Շողշողուն ամպը, որ անոր
պայծառ երեսը կը ծածկէ, երկնից մէջ
դեռ պահելով իր երկարաճիգ եւ ոսկե-
փայլ հետքերը, ծիրանեգոյն ցոլացում-
ներով, միջոցը լոյսերու մէջ կ'ընկղմէ :
Հունոյ գունտն ալ, կապոյտ կամարէն
կախուած ոսկեղէն կանթեղի մը նման
հորիզոնին վրայ կը ճօճի : Մինչ իւր դե-
ղեցիկ լոյսը դաւարեաց վրայ աղօտանշոյլ
կը սփռուի, գիշերուան տիեզերասքօղ
վարագոյրը լեռանց գագաթները կը ծած-
կէ ու դէպ ի դաշտը կը խոնարհի : Այս
այն ժամն է, յորում բնութիւնը, յառա-
ջացող գիշերուան եւ հեռացող ցերեկ-
ուան մէջտեղ, նոր խանդ մը կ'ստանայ
եւ տիւն ու գիշերը ստեղծող Արարչին
ուղղելով իւր դէմքն յուսափայլ, անոր
ստեղծագործ զօրութեան հանդէպ սիրա-
լից՝ կը մատուցանէ առ Նա իւր սրբազան
յարգանքներն :

ՊԵՏՐՈՍ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

ՀՐԱԷՐ ԱՌ ՈՒՍՈՒՑԻՉՍ

Ուսումն. Խորհրդոյ կողմանէ վկայա-
կանի արժանի դատուած ուսուցիչք, ո-
րոց անուանքն արդէն հրատարակուած
են իւրադիրս, կը հրաւիրուին անձամբ
կամ դրով դիմել յԱզգային Պատրիար-
քարան եւ ստանալ իրենց ուսուցչական
վկայականներն :

ԼՈՒՐՔ ԵՒ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ

ՆԵՐՔԻՆ

Խնդութեամբ կ'արձանագրենք թէ՛ վեհ. Սուլթանը բարեհաճած է Իւլայի առաջին աստիճան շնորհել Տպագրական Տեսչի օգնական Վսեմ. Հըֆզի Պէյի ի վարձատրութիւն նորա երկարատեւ բարւոք պաշտօնավարութեան :

Կը շնորհաւորենք Ն. Վսեմութիւնն Կայսերական այս բարձր գնահատմանն համար, որում իրաւամբ կ'արժանանան իւր կարեւոր պաշտօնին մէջ ի հանդէս բերած իւր անժխտելի կարողութիւնք :

Վեհ. Սուլթանը բարեհաճած է նաեւ Սանիյէի երկրորդ աստիճան շնորհել ազգային բազմարդիւն ուսուցիչ Թովմաս Էֆէնտի Թէրզեանի, գնահատելով նորա գովելի ծառայութիւններն երկրին զաւակաց դաստիարակութեան գործին մէջ : Կը շնորհաւորենք զինքն ի սրտէ :

Անասնաբուժական վարժարանին համար Ֆրանսայէն երկու նշանաւոր ուսուցիչներ պիտի բերուին : Այն տշակերտք, որք երեք տարի առաջ Ալֆօնսի անասնաբուժական վարժարանը զրկուած էին իրենց ուսումը կատարելագործելու համար ի մօտոյ մայրաքաղաքս պիտի դառնան :

— Հալքալըի երկրագործական վարժարանին անասնաբուժական քաղաքային ճիւղը մայրաքաղաքս փոխադրուելով պիտի հաստատուէր Սուլթան Մէհմէտ թաղը ապարանքի մը մէջ : Արդ, բժշկական յանձնաժողով մը, յետ քննութեան, առողջապահական տեսակէտով անյարմար դատած է այդ ապարանքին դիրքը, որովհետեւ վարժարանին մէջ անդամազնական փորձեր պիտի կատարուին. հետեւաբար այդ վարժարանին համար ուրիշ շէնք մը պիտի որոշուի :

ԱՐՏԱՔԻՆ

ՊԵԼՃԻՔԱ

Բարձրագոյն կրթութեան ծաւալում
ի Պելճիքս

Պելճիքայի մէջ անցեալ տարիէ ի վեր շարժում մ'սկսած է ի նպաստ բորձրագոյն կրթութեան ծաւալման բազմամարդ կեդրոններու մէջ, անգղիական ձեւով շարժուն դասընթացից միջոցաւ : Մանաւանդ Պրիւսէլ եւ Լիէժ քոլապէս մտած են այս նոր ճամբուն մէջ, Համալսարանական շրջանակի ընդլայնման եղանակ մ'է այս, որով համալսարանի մը կրթիչ ազդեցութիւնը իւր սրահից պատերէն դուրս կ'ելնէ եւ կը տարածուի նոյն իսկ անոնց վրայ որք համալսարանի մը դասուց ընթացքին հետեւելու ո'չ ժամանակ ունին եւ ո'չ հարկ եղած ուսումնական պատրաստութիւնը : Համալսարանին ուսուցիչները կ'երթան իրենց շրջանակին մէջ ու անկէ ալ դուրս գտնուած բազմամարդ քաղաքներ ու աւաններ ու կարեւոր նիւթոց վրայ հրապարակային դասախօսութեանց շարք մը կ'ընեն : 1893 — 94 ներկայ ուսումնական տարւոյն համար, Պրիւսէլի համալսարանին դասատուներուն կողմէ աւանդելի, տասներկու դասընթացք կազմակերպուած են, որք տեղի կ'ունենան Մալին, Անվէրս, Շարլըրուա, Մօնա, Հասէլդե եւ այլ քաղաքաց մէջ : Դասընթացից նիւթերուն մէջ կը գտնուին կերպափոխման վարդապետութիւն (transformisme), ներսական մեծ հիւանդութիւնք, կեդրոնական ջղային դրութիւն, ընկերական վարդապետութեանց պատմութիւն, տարրական ընդհանուր ընկերաբանութիւն, բեղգիական սլամութիւն, գեղարուեստի փիլիսոփայութիւն : Լիէժի Համալսարանին մէջ մի ճիւղը (faculté) իւր անդամներէն մի քանիին պաշտօն յանձնած է հրապարակային դասեր տալ : Այսպէս փիլիսոփայութեան, իրաւաբանութեան ճիւղերու վարժապետք երեք, գիտութեանց ճիւղի

ուսուցիչք երկու, եւ բժշկական համալսարանի վարպետները չորս դասընթացք ընելու պաշտօն առած են այս տեսակ մը ժողովրդական համալսարանին մէջ որոյ օգուտներն անբաւ են: Մանաւանդ բժշկական հրապարակասօսութիւնք մեծ հետաքրքրութիւն կ'ազդեն, կ'ըսուի, ունկնդիր հասարակութեան:

Պրիւսէի մէջ կանացոցու հրապարակային դասեր (Conférences féministes)

Կանանց իրաւանց բեղգեան դաշնաւորութեան ընդհանուր քարտուղարին հրաւիրանօք, երիտասարդ ուսուցիչներու խումբ մը յանձն առած էր այս վերջին ձմեռուան եղանակին մէջ ի Պրիւսէի հրապարակային դասասօսութեանց շարք մը կազմակերպել « նպատակ ունենալով աւանդել կանանց, գիտական հիմանց վերայ, բայց գործնական եղանակաւ, այն ծանօթութիւնները որք անհրաժեշտ են իրենց՝ ընտանեաց ծոցոյն մէջ իրենց սեփական պաշտօնը կատարելու համար: » Անտարակոյս իմաստակ կրիներ, ոչ իսկ գիտնականուհիներ, պատրաստել չէ այս ձեռնարկի նպատակը, կ'ըսէ « կրթութեան Միջազգային Հանդէսը յորմէ կը քաղեմք այս տեղեկութիւնները, այլ պատրաստել օգտակար կրիներ, կարող իմաստասիրելու, իրենց մօր ու դաստիարակուհւոյ դերերը կատարելու: Օտար Հանդէսներու կողմանէ, մասնաւորապէս ի Ս. Բեղերսպուրի եւ ի Լոնտրա, ուշադրութեան եւ գովեստի առարկայ եղած է կանացօգուտ դասասօսաց այս գործը, եւ Լոնտրայի մէջ տիկնանց խումբ մը առաջադրեր է հետեւիլ Պրիւսէի օրինակին:

Ահաւասիկ ցանկը սոյն դասընթացից որք սկսած են 1893 Նոյեմբեր 15էն. — Առողջաբանութիւն ընտանեկան յարկի, առողջաբանութիւն կնոջ եւ մանկութեան (դասախօս՝ Օր. Ֆան Հէրսպինկէլ, վարդապետ ի բժշկութեան), ծանօթութիւնք ընդհ. անդամազննութեան եւ բնասօսութեան, բժշկութիւն ընտանեկան յար-

կի, առտնին դեղագիտութիւն, դաստիարակութեան գիտութիւն, ծանօթութիւնք ընկերային եւ առտնին տնտեսութեան, արուեստն ընտանեկան յարկի մէջ, արուեստն ընթերցման, տարերք պիտանեգոյն իրաւագիտութեան, քաղաքային եւ տնտեսական պայման կանանց, օրէնսգիտութիւն՝ կանանց իրաւանց ու շահուց տեսակէտով:

ԴՊՐՈՑՆԵՐՈՒ ՄԷՋ ՄԱՐՄՆԱԿԱՆ ՊԱՏԻԺ

ԳԵՐՄԱՆԻԱ

Տրէզուրի բժիշկի մը, աղերսագրով խընդրած էր Սաքսոնիոյ ինտրիգարանէն որ մարմնական պատիժները բացարձակապէս արգելուին դպրոցներու մէջ: Խնդիրը յանձնաժողովոյ մը զրկուած էր ի քննութիւն:

Խորհրդարանի վերջին նիստին մէջ վիճարանուցաւ այս խնդրոյն վրայ: Տեղեկաբերը, իբր եզրակացութիւն, յանուն յանձնաժողովոյ, կ'առաջարկէր գործադրութեան չդնել բժիշկին խնդրանքը: Բայց երեսփոխան մը, Պ. Կոլտշդայն, այս առաջարկին դէմ կը խօսէ, ծանրանալով մանաւանդ այն խտրին վրայ որ կը դուրս, կարծես, մէկ կողմանէ կրնազիոններու եւ ընտանեկան դպրոցներու աշակերտաց, եւ միւս կողմանէ նախնական դպրոցներու աշակերտաց մէջտեղ:

Առաջնոց մէջ, կը յարէ նա, մարմնական պատիժները անհրաժեշտ չեն համարուիր գոգցես, բայց միւսներուն մէջ անհրաժեշտ կը դառնան: Խնդրոյն վրայ նայելու է, կը շարունակէ տտեանաբանը, ո'չ միայն դաստիարակութեան տեսակէտով, ո'չ միայն մարդասիրութեան եւ առմանուկն յարգանաց ու գործով տեսակէտով, այլ նաեւ, եւ մանաւանդ, առողջաբանական տեսակէտով, քանի որ քսուեցաւ թէ լուսնոտութեան (սարս) շատ դէպքեր կը պատահեն՝ դպրոցներէ ումանց մէջ ի գործ դրուած պատիժներու չափազանց սաստկութենէն: Ծեծով չէ որ տղայք կը դաստիարակուին. ծեծը կ'ստորնացնէ զմանք, կ'անբարոյակաւնացնէ:

Պ. Կոլտշդայն եւ իր քաղաքական բարեկամները վճռական հակառակորդներ են մարմնական պատիժներու:

Վասն որոյ տտեանաբանը կ'առաջարկէ՝

մատուցեալ աղերսագիրը հաղորդել կառավարութեան, հրաւիրելով զանի ձեռք առնուլ այն միջոցները զորս օգտակար կը դառնայ բաւական համար այս զեղծումները:

Բազմաթիւ ատենաբաններ յանձնաժողովոյ առաջարկին թեր կամ դէմ կը խօսին: Տէրութեան նախարարը, ինքն ալ, կը մասնակցի վիճաբանութեան եւ կարծիք կը յայտնէ թէ մարմնական պատիժները պէտք չէ արգիլուին բացարձակապէս, թէ զաւազանը անհրաժեշտ է երբ աշակերտը անհնազանդութեան յանցանք կը բռնուի, կամ երբ դիմադրութիւն կ'ընէ, եւ կամ երբ անբարոյական վարմունք մը կ'ունենայ: Բայց պէտք է զգուշութեամբ ու չափաւորութեամբ գործածել զայն:

Միջնակարգ դպրոցներու մէջ (լիսէ, գոլէժ), կը յաւելու նախարարը, տնօրէնը կրնայ արտաքսել այն աշակերտը որ չուզէր հպատակիլ դպրոցի կարգ ու կանոնին, բայց նախնական դպրոցներու մէջ, ուր յաճախուիւր պարտաւորիչ եղած է օրէնքով, ուսուցիչք չեն կրնար այդ միջոցին դիմել, եւ այդ ահլ մարմնական պատիժները պէտք է թոյլատրուին, կը բաւէ որ ուսուցիչը ծայրայեղութեան չերթայ:

Վերջապէս, Խորհրդարանը ընդունեց տեղեկագրերին առաջարկը: Միայն տասներեք ձայն հակառակ քուէ տուաւ:

ԱՄԵՐԻԿԱ

Նիւ-Եօքքի դատարարական պաշտօնատան տուած տեղեկութեանց նայելով, մարմնական պատիժներու սահմանումը, աշխարհիս զանազան երկիրներուն մէջ, կամ արգիլուած է՝ ինչպէս ի Ֆրանսսա, կամ ենթարկուած է անաչառ հսկողութեան, ինչպէս ի Գերմանիա:

Տանիմարքայի մէջ, ըստ օրինի՝ ներկիլ չէ երբեք քանակի չորս հարուածէ աւելի տալ:

Նորվեկիոյ մէջ, արգիլուած է զարնել տալը տարեկանէ վեր աղջկանց:

Անգղիոյ մէջ, ցարասիէ ձայնը ամէն տեղ կը գործածուի, բայց շատ թաղ-խորհուրդներ արդէն կը հետեւին Լոնտոնի Սքուլ-Պորտի օրինակին, որ դպրոցի տեսուչներուն ձեռացը միայն կը վստահի զայն, եւ կը պահանջէ, երբ հարկ ըլլայ

անոր գործածութիւնը, մանրամասն տեղեկագրութիւն:

Այս գգոյշ միջոցը ձեռք առնուած է Միացեալ Նահանգներու շատ տեղերը: Մարմնական պատիժները մէկ նահանգի մը, Նիու Ճէրզիի մէջ միայն արգիլուած են ըստ օրինի, նաեւ մի քանի քաղաքներու մէջ, ինչպէս Նիւ-Եօքք եւ Չիքա-կօ: Ուրիշ տեղեր, մանչ տղոց վրայ միայն կը գործադրուին, եւ ըստ Լոքի, միայն այն պարագային յորում կամապաշտ ըմբոստութիւն կ'ընէ աշակերտը:

Այլուր, կը պահանջէ օրէնքը որ նախապէս հօրը գրաւոր հաւանութիւնը առնուի: Վերջապէս, Ֆիլադելֆիոյ մէջ, մարմնական պատիժներու մասին օրինական ոչ մէկ կանոնադրութիւն յիշատակուած է: պարզապէս գործադրութենէ ինկած են այդ կարգի պատիժները:

ԶԱՆԱԶԱՆՔ

ՀԱԿԱՆԵՍԱԿԱՆՔ

Այնպիսի ժամանակի մը մէջ՝ յորում առողջութեան պահպանման վերաբերող գրուածք անյազարար կը կարգացուին, Մասիսի ընթերցողք շատ դժգոհ չեն մնար, կարծեմ, եթէ այդ տեսակ տեղեկութիւններ հաղորդուին իրենց մերթ ընդ մերթ: Հախսնէխակաւներով սկիզբ պիտի ընենք, եւ չեմ կարծեր որ ամենէն քիչ կարեւորէն սկսած կ'ըլլանք, որովհետեւ պէտք է խոստովանիլ թէ բուսականէն աւելի մեռեալներ խղճալի զոհերն են տարափոխիկ հիւանդութենէ վարակուած հիւանդներու, որոնք ապահովապէս չպիտի ուզէին երբեք այս գնով դարմանուիլ:

Միջոցներու այս դարուն մէջ այնքան խօսուած է այդ անխիղճ ճճիներուն վրայ որ հիմայ ամէն մարդ գիտէ թէ տարափոխիկ հիւանդութիւններն, մեծաւ մասամբ, այդ անհունապէս փոքր

ու վտանգաւոր էակներու միջոցաւ կը փոխանցին: Ուստի ինչ որ կրնանք ընել՝ ընելու ենք այդ անգութ ճճիներուն զարգացումը խափանելու եւ զանոնք ջնջելու, վերջապէս համաճարակին առաջին առնելու համար: Ահա հակակեխակսններու կարեւորութիւնն, որ, ինչպէս կը տեսնէք, բաւական մեծ է: Հականեխականք երկու դասերու կը բաժնուին, թեմական եւ ֆիւնիական: Բնականներն են՝ ցուրտն եւ տաքութիւնը: Այսօր հաստատուած իւրողութիւն մ'է թէ ցուրտն թէեւ միջրոպներու զարգացումը կ'արգելէ, բայց զանոնք սպաննելու, ջնջելու կարող է: Այս վերջին կարողութիւնն տաքութեան տրուած է, եթէ 125 աստիճան ըլլայ: Յայտնի է թէ կառավարութիւնք այս միջոցին կը դիմեն զգեստները հականեխակելու համար: Բիւիականներն են՝ բուն հականեխականներն, որոց գլխաւորներն են՝ ֆացախական քրու (ասիս սսեդիֆ) բորակային քրու (ասիս սգոդիֆ), ծծմբական քրու (ասիս սիւզֆիւռիֆ, զաչ եսդր) կիր, իլոս, սիւլֆիւրիկ ֆոսֆոր (ազ սիւլֆիւրիկ), փենական քրու (ասիս ֆեմիֆ), անիսոնի սիւլֆիւրիկ, իլոսիւր սը գեմֆ եւ սիւլֆադ սը ֆիւլիլո:

Քացախական քրուն վրայ խօսիլ գրեթէ աւելորդ է, որովհետեւ ամէն մարդ գիտէ թէ քացախի, այսինքն ջրախառն քացախական թթուի մէջ բանջարեղէնները միջրոպներու աւերէն գերծ կը մնան:

Բորակային քրու. — Սովորական բորակային թթուն (քէզապ) դեղին, ծխացող, սաստիկ այրող հեղուկ մ'է, որ մորթը կը դեղնեցնէ: Մասնաւորապէս Անգլիոյ մէջ, տարափոխիկ ախտէ բռնուած հիւանդներուն սենեակները, հիւանդանոցները այս թթուով կը հականեխեն: Առ այս, հետեւեալ խառնուրդն ընելու է. 60 կռամ ծծմբական քրու (զաչ եսդը), 60 կռամ բորակ (կիւհէրչէլէ, նիդուադ սը քոդա), 32 կռամ ջուր: Նախ ջուրը կը խառնեն թթուին հետ, խառնուրդը կը տաքնայ, յետոյ մէջը քիչ քիչ բորակ կը թափեն: Խառնուրդը ծուխ կ'արձակէ:

Քիլոս. — Քիլոսը կանաչի զարնող դեղին կազ մ'է, հեղձուցիչ, եւ յաճախ կը գործածուի հիւանդներու սենեակը հականեխելու: Բաւ է սկաւառակի մը վրայ դնել քացախով թրջուած քիչ մը իլոսիւր սը շօ կոչուած կիրի նման մարմինը՝ որոյ անունը չլսող չկայ, կարծեմ, գոնէ ընթերցողներուս մէջ: Քացախին ազդեցութեան տակ իլոսիւր սը շօի մէջի քիլոսը դուրս կ'ելլէ:

Կիր. — Փոխանցիկ հիւանդութենէ վարակեալի մը սենեակին պատերը կրով ծփեցնելու է: Համաճարակ հիւանդութեանց ատեն ալ, հիւանդանոցներու, դպրոցներու, եւն. պատերն ալ կրով ծփեցնելու է: Միեւնոյն պարագային մէջ կարելի է գործածել նաեւ ջրախառն ալքոլի (պարզ ջրոյ մէջ շատ քիչ կը լուծուի) մէջ լուծուած սիւլֆիւրիկ ֆոսֆոր, որ սաստիկ թոյն է:

Փենական քրուն առաջին կարգի հականեխական մ'է: Ալքոլի մէջ լուծուած փենական թթուն (ասիս ֆէնիլքը ինքնին հաստատուն, բիւրեղացեալ մարմին մ'է՝ որ ալքոլի մէջ կը լուծուի) մորթը, ճերմակեղէնը եւ զգեստները չ'եղծաներ. ալքոլի մէջ լուծուած վիճակին մէջ հականեխելի մարմինը թրջած ատեն միայն իւր բարերար ազդեցութիւնն ի գործ կը դնէ: Ջուրի մէջ ձգուած կամ իւր վիճակին մէջ ամանի մը մէջ դրուած ատեն օգտակար չի կրնար ըլլալ:

Ծծմբական քրուն ալ զօրաւոր հականեխական մ'է: Հիւանդներու ճերմակեղէնները կատարելապէս կը հականեխին՝ եթէ քիչ մը ծծմբական թթուով խառնուած տաք ջրոյ մէջ ձգուին: Քոլերայէ եւ թիֆոյէ վարակուած հիւանդներու կղկղանքին վրայ նախ ծծմբական թթուով խառնուած ջուր լեցնելու, յետոյ ճեմիլը թափելու է:

Անիսոնի սիւլֆիւրիկ կամ աւելի ծանօթ՝ բայց ոչ աւելի ճիշդ՝ անուամբ ասիս սիւլֆիւրիկ ֆոսֆոր օրիշ բան չէ բայց եթէ այն հեղձուցիչ կազն որ դուրս կ'ելլէ՝ երբ ծծումբն այրի: Այս կազն, որ

— միջանկեալ կերպով ըսենք — կրակը եւ հետեւաբար կեանքը մարելու շատ յարմար է, որովհետեւ գիտութեան մէջ ապրիլ եւ աշիլ հոմանիշ են, այս կազմ որ գինւոյ եւ պտուղի արատներն կը հանէ, այս կազմ, կ'ըսէի, ընտիր հականերսական մ'է նոյնպէս: Կը հասկցուի թէ անիսոնի սիւրճիւռեո յառաջ բերելու համար պէտք է ծծումբ այրել: Տեսէք ինչպէս պէտք է ընել ծխումբ: Սենեկին տախտակամածին եւ պատերուն վրայ ջուր կը սրսկէք, բոլոր ծակերը կը գոցէք, տախտակամածին վրայ կը դնէք երկու աղիւս, ասոնց վրայ ալ երկաթեայ սան մը: այս սանին մէջ կը դնէք 300 կռամ փոշիացեալ ծծումբ, ասոր ալ վրայ մէկ օլիի գաւաթ ալքօլ: շուտ մը կը վառէք, սենեկէն դուրս կ'եղնէք եւ դուռը աղէկ մը կը խփէք: Քառասուն եւ ութ ժամէն սենեակը կատարելապէս կը հականերսութի: Դուռը կը բանաք, սենեակը կը մտնէք՝ թրջած թաշկինակով մը բերան եւ ունգունք գոցելով, պատուհանները կը բանաք, որպէս զի սենեակին օդը մաքրուի: Սենեկին մէջ կարելի է ձգել նաեւ հականերսելի զգեստներն, ճերմակեղէններն, անկողնոյ կազմածներն:

Քլորիւռ սը գեմբը, ջրոյ մէջ լուծուած վիճակի մէջ, յաճախ կը գործածուի հիւանդներուն կղկղանքը հականերսելու: Այս տողերը կարգացողներէն անոնք որ բնալուծութեան վրայ քիչ շատ տեղեկութիւն ունին, գիտեն թէ ջրածինի պատրաստութեան ատեն քլորիւռ սը գեմբ յառաջ կուգայ, եթէ յիշեալ կազմ պատրաստուի զինկով եւ աւիս քլորիսոնիով (ջուրը լուելայն կը հասկցուի):

Սիւրճադ սը ֆիւիլիոն կապոյտ թունաւոր աղ մ'է որ ջրոյ մէջ լուծուած վիճակի մէջ կրնայ ծառայել քոլերայէ եւ թիֆօյէ վարակեալներու կղկղանքն հականերսելու: Նոյն պաշտօնը կրնայ կատարել նաեւ սիւրճադ սը ֆեռ կոչուած կանաչ աղն:

Վերջացնելու համար, ըսենք թէ մասնաւորապէս վարժարաններու մէջ՝ ամենէն գլխաւոր հականերսական մաքրու-

թիւնն է: Մաքրութիւն՝ չէնքի մասին, մաքրութիւն՝ ուսանողաց մասին: Եւ սակայն, որքա՛ն վարժարաններ ունինք տակաւին դէր կը գտնես ամէն բան, այո՛, ամէն բան, բաց ի մաքրութենէ: Սանդուղ, պատ, պատուհան, գրասեղան՝ լի տեսակ տեսակ աղտոեղութեամբ, գարշահոտութիւն՝ ամէն կողմ, աշակերտներ՝ որոց մազերուն կարծես սանտր չէ դպած, որոց եղունգներն՝ ածուխի պէս սեւ՝ մագիլի ձեւ են առած, որոց ականջներուն մէջ գէջն է քարացած, որոց դէմքն, վիզն, ձեռքերն գարշելի կերպով աղտոտ են, որոց, վերջապէս, արդուզարդն է տնիւնամայնքան՝ որքան կրնայ ըլլալ: Ահա ինչ որ կարեւոր է ինկատ առնուլ ամէն բանէ առաջ՝ վարժարանին մէջ՝ դպրոցին ամբողջ շէնքն աւել տալ խնամօք ամէն երեկոյ, եւ մէկ երկու շաբաթն, կամ գոնէ ամիսն անգամ մը, սրբել տալ, առ այս, եթէ հարկ ըլլայ, շաբաթ կէս օրէ վերջն աշակերտները արձակելով, մեծ հոգ տանիլ մասնաւորապէս ձեմիչներու մաքրութեան եւ հականերսման, տարին գոնէ մի անգամ պատերը ճերմկեցնել տալ: Ասոնցմէ զատ, հանգստի միջոցներուն եւ զբօսանքի ժամանակ դասարաններուն դուռները եւ պատուհանները բանալ, որպէս զի ապականեալ օդին տեղ՝ կենսատու մաքուր օդ մտնէ ներս: ամէն առաւօտ, անուանակոչութեան հետ՝ աչքէ անցնել տղայոց մաքրութիւնն եւ արդուզարդն, ու տուն զրկել այս մասին գոհացուցիչ վիճակի մէջ չներկայացող աշակերտն, որպէս զի մաքրուի եւ ապա վերադառնայ ի վարժարան: Ասո՛նք են ապահովագոյն միջոցներն դպրոցական առողջապահութեան: Համաճարակի ատեն նոր գգուելութիւններ կարելի է աւելցնել անոնց վրայ, ինչպէս՝ աւելի հոգ տանիլ աշակերտաց կերածին, ճաշէն առաջ եւ ետքը քիչ մը յեմոնական քթուով խառնուած ջուրով բերանը ցողուել, այդ ջուրն գործածել՝ իբր ըմպելիք, ձեռքերն աղէկ մը լուալ աճառով, եւն:

Յ. Բ. ՇԻՆԴԵԱՆ

ՄՏԱԾՈՒՄՆԵՐ

ՏԻՍԴԸՐՎԷԿԻ(*) ԳՈՐԾԵՐԷՆ ՔԱՂՈՒԱԾ

Պէտք է ուսուցանել տղուն փորձառութեամբ, եւ միայն այն բանը սովորեցնել զոր կրնայ ճանչնալ այս միջոցով:

Մեքենական կրթութիւնը մտքին մահն է:

Պէտք չէ երբեք ուսնիլ առանց հասկընալու կամ հասկնալէ յառաջ:

Միայն յիշողութեան կոչումը ընել՝ այդ վարժեցնել (dresser) է մարդը, ոչ թէ հրահանգել. այդ՝ դէպ յանասուն խոնարհեցնել է զնա: Յիշողութիւնը իմացական կարողութեանց ամենէն նուազ ազնիւն է:

Զարգացումը շատ գիտնալուն մէջ չի կայանար, այլ լաւ գիտնալուն:

Լաւ դատարարակ-ուսուցիչը իր նիւթը կը սահմանափակէ՝ որպէս զի զայն հիմնապէս ուսուցանէ:

Տղուն արուած կրթութիւնը այն պայմանաւ միայն լաւ է որ տարրական ըլլայ:

Բան մ'այնքան ազիտաբեր չէ որքան կանխահաս ու աշակերտին կարողութեանէն գերիվեր ուսուցումը:

Լաւ վարժապետը լռութեամբ անցածներէն կը ճանչնամ:

Յոռի ուսուցումը միայն միտքը չի քանդեր, այլ նկարագիրն ալ:

Կարծել թէ բաւական է լաւ գիտնալ լաւ ուսուցանելու համար, ծանր ու վտանգաւոր սխալ մ'է. մեթոտի ծանօթութիւն ունենալով մարդ լաւ վարժապետ չ'ըլլար, բայց լաւ վարժապետին անհրաժեշտ պէտք է այդ:

(*) Տիւղըրվէկ (Ատուֆ), նշանաւոր գերմանացի մանկավարժ, ծնած է Զիլէնի մէջ 1790ին եւ մեռած ի Պէրլին 1866ին: Ունի բազմամիւ կրթական գրուածներ որք մեծ հռչակ եւ հեղինակութիւն ստացած են բոլոր Գերմանիոյ մէջ:

Միայն գէշ ուսուցումն է դիւրին:

Մտքին զարգացումը կը կայանայ փընտռելուն մէջ, ո'չ թէ գտնելուն:

Մտքին մշակումը ճամբորդութեան մը կը նմանի, հաճելին ու օգտակարն հասնիլը չէ, հապա քալիլը:

Ուշադրութիւնը մտքին ամենապատուական կարողութիւններէն մին է: Դըպրոցականը կրնայ մոռնալ սովորածը, բայց ուշադիր ըլլալու կարողութիւնը, անգամ մ'ստացուելէ ետեւ, ալ չի կորսուիր:

Որչափ սովոր՝ այնքան կը սովորեցնէ մարդ. նա որ սովորելէ եւ ինքզինք մշակելէ կը դադարի՝ անկարող կ'ըլլայ ուրիշները մշակելու:

Կ'ուզէ՞ք վարժապետ մը դատել, դիտեցէք չէ՞ թէ սովորեցուցածը, այլ սովորեցնելու կերպը եւ իրեն ինչ ըլլալը:

Նա՛ միայն կ'ուսուցանէ, կը դատարարակէ ու կը մշակէ, որ աղաքը իր ուսուցման ու ինքզինքին կը շահագորգուէ:

Աշակերտը կրկնապէս կը սովորի երբ զըւարթ է. ու միայն հաճոյքով սովորուածն է որ կենդանի է:

ՄՐՅՄԱՆ ԴՐՈՒԱԾ

Վերոյգրեալ մտածումներէն «Միայն գէշ ուսուցումն է դիւրին» խօսքը պարզարանել:

Ծանօթ. — Պատ. Ուսուցիչներէն եւ Ուսուցչուհիներէն որոնք որ ուզեն շարադրել այս նիւթին վրայ՝ պարտին մինչեւ մէկ ամիս իրենց գրութիւնները մեզ հասցնել: Լաւագոյն շարադրութիւնը պիտի տպուի Հանդիսիս մէջ, երկրորդն ու երրորդը պատուաւոր յիշատակութեան պիտի արժանանան: Գրութեանց գնահատումը Ուսումնական Խորհրդոյ մէջ պիտի կատարուի:

Պ Ա Տ Ո Ւ Ա Կ Ա Լ Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ի Յ Ք



ԳԵՐ. Տ. ՄԵԼՔԻՍԵՂԵԿ Ս. ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒՐԱՏԵԱՆ

» Տ. ՄԱՂԱՔԻԱ Ս. ԵՊԻՍԿՈՊՈՍ ՕՐՄԱՆԵԱՆ

ԱՐԺ. Տ. ԵՂԻՇԷ Ծ. ՎԱՐԴԱՊԵՏ ԴՈՒՐԵԱՆ

» Տ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱԻԱԳ ԲԱՀԱՆԱՅ ՄԿՐԵԱՆ

ՄԵԾ. ՏՕՔԹ. ԵԴՈՒԱՐԴ ԷՖԷՆՏԻ ՄԱՍԻՍ

» ԵՂԻԱ » ՏԷՄԻՐՃԻՊԱՇԵԱՆ

» ԹՈՎՄԱՍ » ԹԷՐԶԵԱՆ

» ԿԱՐԱՊԵՏ » ԻԹԻԻՃԵԱՆ

» ՀՐԱՆՏ » ԱՍԱՏՈՒՐ

» ՄԱՏԱԹԻԱ » ԴԱՐԱԳԱՇ

» ՅԱԿՈԲ » ԴՈՒՐԳԷՆ

» ՅԱՐՈՒԹԻՒՆ » Ն. ՄՕՍՏԻՉԵԱՆ

» ՅՈՎՍԷՓ » ԵՈՒՍՈՒՖԵԱՆ

» ՏՕՔԹ. ՆԱԶԱՐԷԹ » ՏԱՂԱԻԱՐԵԱՆ

» ՆՇԱՆ » ԳԱԼՖԱՅԵԱՆ

» ՏՕՔԹ. ՊԵՏՐՈՍ » ՄԱԽՈՆԵԱՆ

» ՎԱՀԱՆ » ՄԱՆՈՒԿԵԱՆ

» ՏՕՔԹ. ՎԱՀՐԱՄ » ԹՈՐԳՈՄԵԱՆ

ՄԱՍԻՍ ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՀԵՏԵՒԵԱԼ ԾՐԱԳՐՈՎ

1. Մանկավարժութիւն — Դաստիարակութեան գիտութեան ու պատմութեան, Հոգեբանութեան եւ Բարոյագիտութեան վերաբերեալ յօդուածներ: — Մանկավարժական խնդրոց վրայ մրցման դրուած հարցումներ:

2. Դասախօսական — Նախակրթական տիպար դասեր: — Նախնական ու երկրորդական կրթութեան վերաբերեալ կարեւոր ու նոր դասընթաց: Հրահանգք եւ անջատ դասախօսութիւնք կամ ամփոփումներ դասուց: — Բացատրեալ ընթերցումներ:

3. Քննական — Դասագրոց արժանաւորութեան մասին քննադատական յօդուածք: — Վարժարանական այցելութեանց սպաւորութիւնք:

4. Տնօրնութիւնք — Ուսումնական տնօրնութիւն եւ Ազգային վարչութեան ի մասին Ազգային վարժարանաց:

5. Լուրք եւ տեղեկութիւնք — Ազգային, Ներքին եւ Արտաքին կրթական լուրեր եւ ծանօթութիւնք:

6. Զանազանք — Այլ եւ այլ շահեկան եւ հրահանգիչ գրութիւնք:



ՊԱՅՄԱՆՔ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ

Մասիսի տարեկան բաժանորդագիրն է, կանխիկ վճարելի, Կ. Պոլսոյ համար 40՝ դր. իսկ գաւառաց համար 50 դր. քրթասարի ծախքը մեր վրայ: Իւրաքանչիւր քերթի գինն է 2 դր.: Դաւառներէ բաժանորդագրի փոխարէն նամակադրուել եւս կ'ընդունուի 15% զեղչով: Բաժանորդագրութեան, հրատարակութեան եւ այլ ամէն խնդրոց համար պէտք է դիմել առ Տնօրէնն Յովհաննէս Արամեան, Կեդրոնական գրաստան, Կ. Պոլիս, Չափմանըլար քիւ 59: